ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

**Swiss Agency for Development and Cooperation SDC**

UNDP

*Empowered lives. Resilient nations.*

# ՀՀ հինգ բազմաբնակավայր համայնքներում հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների վերաբերյալ քաղաքացիների գոհունակության ամփոփիչ գնահատում


Երևան
2019

*Քաղաքացիների գոհունակության գնահատման» զեկույցը պատրաստվել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից՝ Հայաստանում Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գրասենյակի ֆինանսական աջակցությամբ, «Հայաստանում տեղական ինքնակառավարման ծրագրի» շրջանակներում: Զեկույցում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ համընկնեն և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գրասենյակի և ՄԱԶԾ տեսակետների հետ:*

<u>**Ծրագրի թիմ**</u>

Նատալյա Հարությունյան
Ժաննա Հարությունյան
Վալենտինա Գևորգյան

<u>**Դաշտային աշխատանքի թիմ**</u>

Դիանա Դանիելյան
Ավետ Դիշունց
Վերգինե Թադևոսյան
Մարի Թևոսյան
Լուսինե Կարապետյան
Մարիամ Մկրտչյան
Լիլիթ Ներսեսյան
Աստղ Վարդանյան
Դավիթ Սնխչյան
Հրաչ Քոչարյան

# Հապավումների ցանկ

| | |
|---|---|
| ԱԳ | Ամփոփիչ (եզրափակիչ) գնահատում |
| ԱՄՆ ՄԶԳ | ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն |
| ԵԳ | Ելակետային գնահատում |
| ԿՆՆ | Կապիտալ ներդրումների նախագծեր |
| ԿՏԺ-2 | Կանայք և տեղական ժողովրդավարությունը 2 ծրագիր |
| ՀԲ | Համաշխարհային բանկ |
| ՀԳՔ | Համայնքային գնահատման քարտ (CSC) |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀՆԾ | Համայնքային ներդրումների ծրագիր |
| ՀԳՔՔ | Համայնքային գնահատման քարտային մեթոդի քննարկումներ (CSD) |
| ՀՏԶՀ | Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ |
| ՀՏՎԾՎՓ | Հասարակագիտական տվյալների վերլուծության ծրագրային վիճակագրական փաթեթ (SPSS) |
| ՄԱԶԾ | ՄԱԿ-ի զարգացման ծրագիր |
| ՇՀԶԳ | Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն |
| ՎՏԲ | Վարչատարածքային բարեփոխումներ |
| ՏԻ | Տեղական ինքնակառավարում |
| ՏԿԶՆ | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն |
| ՏԻԾ | Հայաստանում տեղական ինքնակառավարման ծրագիր |
| ՑԲ | Ցուցիչների բանկ |

## Ամփոփագիր

Սույն զեկույցում ներկայացված են Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի և Սյունիքի մարզերի հինգ բազմաբնակավայր համայնքներում հանրային ծառայությունների վերաբերյալ քաղաքացիների գոհունակության ամփոփիչ գնահատման արդյունքում ստացված տվյալները: 2017-2019 թվականներին Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալությունը (ՇԶՀԳ) աջակցել է համայնքային ներդրումային ծրագրերի (ՀՆԾ) իրագործմանը ՀՀ Գորայք, Ջերմուկ, Մեղրի, Տեղ և Զառիթափ բազմաբնակավայր համայնքներում: Զարգացման ծրագրերն աջակցություն են ստացել Հայաստանում տեղական ինքնակառավարման ծրագրի (ՏԻԾ) շրջանակում՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) հետ համագործակցությամբ: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ) նշված հինգ համայնքներում իրականացրել է հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված ծրագրեր:

2017 թվականի հունիսից օգոստոս ամիսներին, նախքան բազմաբնակավայր համայնքներում բարելավմանն ուղղված ծրագրերի մեկնարկը, ՄԱԶԾ «Կանայք և տեղական ժողովրդավարությունը-2» (ԿՏԺ-2) ծրագրի թիմն իրականացրել է գոյություն ունեցող հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների վերաբերյալ քաղաքացիների գոհունակության ելակետային գնահատում (ԵԳ): Այդ գնահատման նպատակն էր ստանալ տվյալներ և տեղեկություններ՝ նախքան ծրագրերի իրականացումը: Մինչ սույն ամփոփիչ զեկույցի համար տվյալները հավաքագրվում էին, որոշ ընտրված ծրագրեր ավարտվեցին, մինչդեռ որոշ ծրագրեր դեռևս ընթանում էին: Սույն գնահատումն իրականացվել է՝ հավաքագրելու տվյալներ՝ նպատակ ունենալով դրանք համեմատել 2017 թվականին իրականացված ելակետային գնահատման արդյունքների հետ, հասկանալու՝ թե արդյոք միջամտությունը հանգեցրել է որևէ փոփոխության: Ամփոփիչ գնահատման արդյունքները սույն զեկույցում դիտարկվում են ելակետային գնահատման արդյունքների համեմատության տեսանկյունից:

Այս զեկույցը ներկայացնում է տվյալներ առանձին ծառայությունների և ենթակառուցվածքային պայմանների, այդ թվում՝ միջհամայնքային ճանապարհների, հանրային տրանսպորտի, գյուղատնտեսական ծառայությունների և աղբահանության վիճակի վերաբերյալ քաղաքացիների գոհունակության, գիտելիքների, պատկերացումների և վերաբերմունքի մասին: Ուսումնասիրության ընթացքում գնահատվել են նաև համայնքային կյանքին մասնակցության վերաբերյալ քաղաքացիների գիտելիքները, տեղական պաշտոնյաների նկատմամբ վստահության հետ կապված խնդիրները և համայնքային ներդրումների ծրագրերի ազդեցությունը: Գնահատումը ներկայացնում է քանակական տվյալներ, որոնք հիմնավորվում են որակական տվյալների վերլուծությամբ: Ամփոփիչ գնահատումն անց է կացվել 2019 թվականի մարտից ապրիլ ընկած ժամանակահատվածում: Այս ելակետային գնահատումն իրականացվել է ՄԱԶԾ-ի դաշտային աշխատանքների թիմի (ԿՏԺ առաջնորդության ծրագրի անդամներ) կողմից՝ ծրագրի հետազոտողի ղեկավարման ներքո:

## Բովանդակություն

Ամփոփագիր....4
Աղյուսակների ցանկ....6
Գծապատկերների ցանկ....7
Ներածություն....8
Մեթոդաբանություն....9
Հետազոտության արդյունքները....15
Համայնքներում ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների գնահատում....15
ՋԵՐՄՈՒԿ....16
ՋԱՌԻԹԱՓ....22
ՄԵՂՐԻ....27
ԳՈՐԱՅՔ....31
ՏԵՂ....33
Ա. Համայնքային առաջնահերթ խնդիրները և իրազեկվածությունը համայնքային ներդրումների ծրագրերի վերաբերյալ....39
Բ. Քաղաքացիների ձայնը և վստահությունը ՏԻՄ-երի նկատմամբ....43
Գ. Ծրագրերի հնարավոր ազդեցությունը....46
Եզրակացություն 50
Առաջարկություններ 52
Հավելված 1 ՀՀ համայնքներում քաղաքացիների գոհունակության....54
Հավելված 2 Քաղաքացիների գոհունակություն՝ ՀԳՔ ընդհանուր տվյալներ....62
Հավելված 3 Քաղաքացիների գոհունակություն՝ ըստ ծառայությունների (հարցում)....66

## Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1 Համայնքների ընտրանք ........................................................................................................................ 11
Աղյուսակ 2 Համայնքների ընտրանք՝ ընդհանուր թիվ ................................................................................................... 12
Աղյուսակ 3 Հարցվողների կրթական մակարդակը............................................................................................................. 13
Աղյուսակ 4 Բնակիչների զբաղվածություն........................................................................................................................ 13
Աղյուսակ 5 Բնակիչների գոհունակությունը բոլոր ծառայությունների, ենթակառուցվածքների վերաբերյալ........................................................................................................................................................ 15
Աղյուսակ 6 Ջերմուկ՝ ՀԳՔ քննարկումների ընդհանուր տվյալներ (միջբնկվ. ճանապարհների սպասարկում) ......................................................................................................................................................... 17
Աղյուսակ 7 Ջերմուկ՝ ՀԳՔ քննարկումների ընդհանուր տվյալներ (միջբնկվ. տրանսպորտային կապի ապահովում).......................................................................................................................................................... 18
Աղյուսակ 8 ՋԵՐՄՈՒԿ՝ ՀԳՔ քննարկումների ընդհանուր տվյալներ (գյուղատնտ. ծառայություններ) 20
Աղյուսակ 9 ՀԳՔ քննարկումների ընդհանուր տվյալներ (աղբահանություն) ............................................ 22
Աղյուսակ 10 Զառիթափ՝ ՀԳՔ քննարկումների ընդհանուր տվյալներ (միջբնկվ. տրանսպորտային կապի ապահովում).......................................................................................................................................................... 23
Աղյուսակ 11 Զառիթափ՝ ՀԳՔ քննարկումների ընդհանուր տվյալներ (գյուղատնտ. ծառայություններ)25
Աղյուսակ 12 ՀԳՔ քննարկումների ընդհանուր տվյալներ (աղբահանություն) .......................................... 26
աղյուսակ 13 Մեղրի. ՀԳՔ քննարկումների ընդհանուր տվյալներ (միջբնկվ. ճանապարհների սպասարկում) ......................................................................................................................................................... 28
Աղյուսակ 14 Ջերմուկ՝ ՀԳՔ քննարկումների ընդհանուր տվյալներ (միջբնկվ. տրանսպորտային կապի ապահովում).......................................................................................................................................................... 29
Աղյուսակ 15 ՀԳՔ քննարկումների ընդհանուր տվյալներ (աղբահանություն) .......................................... 30
Աղյուսակ 16 Մեղրի՝ ՀԳՔ քննարկումների ընդհանուր տվյալներ (գյուղատնտ. ծառայություններ) ...... 32
Աղյուսակ 17 Ջերմուկ՝ ՀԳՔ քննարկումների ընդհանուր տվյալներ (միջբնկվ. ճանապարհների սպասարկում) ......................................................................................................................................................... 33
Աղյուսակ 18 Տեղ՝ ՀԳՔ քննարկումների ընդհանուր տվյալներ (միջբնկվ. տրանսպորտային կապի ապահովում).......................................................................................................................................................... 35
Աղյուսակ 19 Տեղ՝ ՀԳՔ քննարկումների ընդհանուր տվյալներ (գյուղատնտ. ծառայություններ)............ 36
Աղյուսակ 20 Տեղ՝ ՀԳՔ քննարկումների ընդհանուր տվյալներ (աղբահանություն)................................... 38
Աղյուսակ 21 Առաջնահերթ համայնքային հիմնախնդիրները հինգ համայնքներում, ԱԳ 2019............... 39
Աղյուսակ 22 ՀՆԾ-ների մասին ընդհանուր իրազեկվածության վերաբերյալ ընկալումները .................. 41
Աղյուսակ 23 Քաղաքացիների ձայնի նշանակությունը................................................................................ 43
Աղյուսակ 24 Քաղաքացիների ձայնի նշաբակությունը ................................................................................ 44
Աղյուսակ 25 Վստահություն ՏԻՄ-երի նկատմամբ ........................................................................................ 45
աղյուսակ 26 Խոշորացումից հետո դրական փոփոխություն ......................................................................... 46
աղյուսակ 27 Ազդեցությունը ՏԻՄ-երում կանանց քանակի ավելացման արդյունքում ............................. 49
Աղյուսակ 28 Միջբնակավայրային ճանապարհների սպասարկում ............................................................. 62
Աղյուսակ 29 Միջբնակավայրային տրանսպորտային կապի ապահովում ................................................. 62
Աղյուսակ 30 Գյուղատնտեսական տեխնիկա, սպասարկում ........................................................................ 63
Աղյուսակ 31 Աղբահանության, սանիտարական մաքրման կազմակերպում ............................................ 63
Աղյուսակ 32 Ընդհանուր տվյալներ՝ ՀԳՔ-հարցում. միջբն-ն ճ-ի սպասարկում .......................................... 64
Աղյուսակ 33 Ընդհանուր տվյալներ՝ ՀԳՔ- հարցում. միջբն-ն տրանպ-ն կապի ապահովում.................... 64
Աղյուսակ 34 Ընդհանուր տվյալներ՝ ՀԳՔ- հարցում. գյուղ.տեխնիկա, սպասարկում ................................ 65
Աղյուսակ 35 Ընդհանուր տվյալներ՝ ՀԳՔ- հարցում. աղբահանության....................................................... 65
Աղյուսակ 36 Միջբնակավայրային ճանապարհների սպասարկում ............................................................. 66

Աղյուսակ 37 Միջբնակավայրային տրանսպորտային կապի ապահովում ........ 66
Աղյուսակ 38 Գյուղատնտեսական տեխնիկա, սպասարկում ........ 67
Աղյուսակ 39 Աղբահանություն ........ 67

## Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1 Ջերմուկ. ճանապարհների սպասարկում. ՀԳՔՔ 16
Գծապատկեր 2 Ջերմուկ. տրանսպորտային կապի ապահովում. ՀԳՔՔ ........ 18
Գծապատկեր 3 Ջերմուկ. Գյուղատնտեսական ծառայություններ. ՀԳՔՔ ........ 20
Գծապատկեր 4 Ջերմուկ. Աղբահանություն. ՀԳՔՔ ........ 21
Գծապատկեր 5 Զառիթափ. միջբնկվ. տրանսպորտային կապի ապահովում. ՀԳՔՔ ........ 23
Գծապատկեր 6 Ջերմուկ. գյուղատնտեսական ծառայություններ. ՀԳՔՔ ........ 24
Գծապատկեր 7 Զառիթափ. աղբահանություն. ՀԳՔՔ ........ 26
Գծապատկեր 8 Մեղրի. ճանապարհների սպասարկում. ՀԳՔՔ ........ 27
Գծապատկեր 9 Մեղրի. տրանսպորտային կապի ապահովում. ՀԳՔ ........ 29
Գծապատկեր 10 Մեղրի. գյուղատնտեսական ծառայություններ. ՀԳՔՔ ........ 30
Գծապատկեր 11 Մեղրի. գյուղատնտեսական ծառայություններ. ՀԳՔՔ ........ 32
Գծապատկեր 12 Ջերմուկ. ճանապարհների սպասարկում. ՀԳՔՔ 33
Գծապատկեր 13 Տեղ. տրանսպորտային կապի ապահովում. ՀԳՔՔ ........ 34
Գծապատկեր 14 Ջերմուկ. գյուղատնտեսական ծառայություններ. ՀԳՔՔ 36
Գծապատկեր 15 Տեղ. աղբահանություն. ՀԳՔՔ ........ 37
Գծապատկեր 16 Բնակիչների իրազեկվածությունը ՀՆԾ-ների մասին ........ 41
Գծապատկեր 17 Վստահություն ՏԻՄ-երի նկատմամբ ........ 44
Գծապատկեր 18 Խոշորացումից հետո դրական փոփոխություն ........ 46
Գծապատկեր 19 Ազդեցությունը տիմ-երում կանանց թվի ավելացման արդյունքում ........ 48

## Ներածություն

2018 թվականի ապրիլին Հայաստանում տեղի ունեցավ համաժողովրդական շարժում, որը հայտնի դարձավ որպես «Թավշյա հեղափոխություն»: Այդ իրադարձությունները հանգեցրեցին իշխանափոխության, և խորհրդարանական ընտրությունների (2018թ. դեկտեմբեր) արդյունքում ձևավորվեցին նոր խորհրդարան և նոր կառավարություն: Նախորդ կառավարությունը հաստատել էր «*Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ*» փաստաթուղթը՝ նպատակ ունենալով ընդլայնել տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետությունն ու ծախսարդյունավետությունը հանրային ծառայությունների մատուցման հարցում: Ներկայում, նոր կառավարությունը ստանձնել է բարեփոխումների և բոլոր ոլորտների, ներառյալ՝ տեղական ինքնակառավարման մեխանիզմների վերակենդանացման հանձնառություն: Հեղափոխությունից հետո համայնքների խոշորացման գործընթացը հապաղել է: Չի ընթանում քննարկում այն մասին, թե կոնկրետ ինչպես պետք է զարգանա տեղական համայնքների և դրանց խոշորացման հետ կապված իրավիճակը:

2014 թվականին Հայաստանում մեկնարկել է Տեղական ինքնակառավարման ծրագիրը, որը համատեղ ֆինանսավորվում էր Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ/SDC) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից՝ ՀՀ վարչատարածքային բարեփոխումների իրականացման գործում Հայաստանի կառավարությանն աջակցելու նպատակով: Այս բարեփոխումն իրականացվում է ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) հետ համագործակցությամբ: Հիմնական ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների բարելավման հարցում նոր ձևավորված համայնքներին աջակցելու նպատակով՝ ՇԶՀԳ-ն սատարել է կապիտալ ներդրումների նախագծերի (ԿՆՆ) իրականացումը Հայաստանի հետևյալ հինգ բազմաբնակավայր համայնքներում՝ Ջերմուկ և Զառիթափ (Վայոց ձոր), Գորայք, Մեղրի և Տեղ (Սյունիք): Աջակցությունը տրամադրվել է Համաշխարհային բանկի Հավատարմագրային հիմնադրամի միջոցով, իսկ համայնքային ներդրումների ծրագրերն իրականացվում են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից: ՀՆԾ-ները վերաբերում են մի շարք ծառայությունների, ներառյալ՝ միջհամայնքային ճանապարհների (այսուհետ՝ ճանապարհներ) նորոգումը, հանրային տրանսպորտի ենթակառուցվածքների (այսուհետ՝ տրանսպորտ) բարեկարգումը, գյուղատնտեսական ծառայությունների և աղբահանության հասանելիությունը: ԶՀՇԳ-ն պատվիրել է ամփոփիչ գնահատում (ԱԳ)՝ գնահատելու համար համայնքային ներդրումների ծրագրերի արդյունքի ու ազդեցության վերաբերյալ քաղաքացիների գոհունակության աստիճանը:

Սույն զեկույցում ներկայացված է ամփոփիչ գնահատման նպատակով հավաքագրված տվյալների վերլուծությունը: Վերլուծության շրջանակում համեմատվում են 2017 թվականին անցկացված ելակետային գնահատման տվյալները, և այդ համեմատության հիման վրա ձևակերպվում են եզրակացություններ: Այս զեկույցը պատրաստվել է, որպեսզի ապահովի օժանդակ տեղեկություններ ծրագրի իրականացման և ապագայում ֆինանսավորման ու միջամտությունների գերակա ուղղություններն ավելի լավ հասկանալու, ինչպես նաև Հայաստանում բարեփոխումների գործընթացին սատարելու համար: Սույն զեկույցն ի մի է բերում տվյալներ ՀՆԾ-ների իրականացման ընթացքում ու ավարտից հետո հինգ

համայնքներում առանձին ծառայությունների որակի ու հասանելիության վերաբերյալ քաղաքացիների գոհունակության մասին:

Այս զեկույցը պահպանել է ելակետային գնահատման մեթոդաբանությունը, որպեսզի հնարավոր լինի գնահատել առաջընթացը, եթե այդպիսին կա, յուրաքանչյուր համայնքի ու ծրագրի հաշվով: Այս ամփոփիչ գնահատումն իրականացվել է ՄԱԶԾ-ի «Կանայք տեղական ժողովրդավարական գործընթացներում-2» ծրագրի շրջանակում (ՇԶՀԳ-ի կողմից համաֆինանսավորմամբ), որի նպատակն է ընդլայնել կանանց ու երիտասարդների առաջնորդությունը և մասնակցությունը տեղական մակարդակում որոշումների կայացմանը: Սույն զեկույցը ներկայացնում է ամփոփիչ գնահատման արդյունքները և վերլուծում է դրանց առնչվող մտահոգությունները, որոնք վեր են հանվել վերոհիշյալ համայնքներում, գնահատման ընթացքում: Ակնկալվում է, որ գնահատման արդյունքները և եզրակացությունները հաշվի կառնվեն ՀՆԾ-ներ իրականացնողների կողմից և համայնքներում ապագա ծրագրեր կատարելու նպատակով:

## Մեթոդաբանություն

Ամփոփիչ գնահատման համար կիրառվել են քանակական հետազոտության մեթոդներ՝ համադրելով հետևյալ գործիքները. Համայնքային գնահատման քարտեր (ՀԳՔ) և հարցաշարի հիման վրա հարցում հինգ համայնքների բնակիչների շրջանում: Քանակական տվյալները համալրվել են հարցման բաց հարցերին տրված պատասխանների ու դաշտային աշխատանքներն իրականացնողների որակական դիտարկումների վերլուծությամբ: Գնահատումը կազմակերպվել է չորս փուլով՝ ներառելով գործողություններ, որոնք նկարագրված են ստորև:

| | | |
|---|---|
| Փուլ I | **Նախապատրաստական**. (ա) փաստաթղթերի գրասենյակային ուսումնասիրության թարմացում, ծրագրային փաստաթղթերի հավաքում և դրանց հետ ծանոթացում, (բ) քննարկումներ ՀՏԶՀ աշխատակիցների հետ, (գ) դաշտային աշխատակիցների հավաքագրում թիրախային համայնքների բնակիչների և ՄԱԶԾ ԿՏԺ-2 ծրագրի ներկայացուցիչների շրջանում, (դ) ԱԳ գնահատման մեթոդաբանության և աշխատանքային պլանի վերջնականացում: |
| Փուլ II | **Համայնքային գնահատման քարտերով (ՀԳՔ) քննարկումներ (ՀԳՔՔ)** հինգ համայնքներում. (ե) ՀԳՔ-ների թարմացում և վարողների վերապատրաստում, (զ) շահակիցների և օգտագործողների քարտեզագրում և ՀԳՔ-ներով քննարկումների (ՀԳՔՔ) մասնակիցների ընտրություն, (է) հինգ համայնքներում մասնակիցների (օգտագործողներ և ծառայություն մատուցողներ) հետ կապի հաստատում, հանդիպումների պլանավորում, (ը) ՀԳՔ հիման վրա քննարկում ծառայությունից օգտվողների և ծառայություն մատուցողների մասնակցությամբ, որին հետևում է ընդհանուր (համատեղ) հանդիպում յուրաքանչյուր համայնքում, (թ) ՀԳՔՔ արդյունքների փաստաթղթավորում: |
| Փուլ III | **Հարցում**. (ժ) հարցման գործիքի և տվյալների ներմուծման առցանց հարթակի թարմացում, (ժա) զրուցավարների վերապատրաստում և հարցման գործիքի, համաձայնության ձևաթղթի, հարցման ընտրանքի ձևավորման մեթոդաբանության և իրականացման ռազմավարության ներկայացում, (ժբ) նախաթեստավորում և դաշտային աշխատանքներ համայնքներում, |

| | |
|---|---|
| | հաշվետվությունների ներկայացում հետազոտողին, դաշտային աշխատանքների ղեկավարում, (ժգ) «ՀՏՎԾՎՓ» [SPSS] համակարգչային ծրագրով տվյալների շտեմարանի ստեղծում, հարցման տվյալների մուտքագրում և մշակում: |
| Փուլ IV | **Վերլուծություն**. (ժդ) ՀԳՔՔ-ների և հարցման արդյունքների վերլուծություն, (ժե) ստացված արդյունքների քննարկում ելակետային գնահատումն իրականացրած պատասխանատու թիմի հետ, (ժզ) ամփոփիչ գնահատման զեկույցի պատրաստում և վերջնականացում: |

Ծանոթագրություն ցուցիչների համախմբի վերաբերյալ. Այս ուսումնասիրությունն օգտագործում է ցուցիչներ, որոնք մշակվել են ելակետային գնահատման թիմի կողմից, 2017 թվականին: Ցուցիչների համախումբը (ՑՀ) մշակվել է թիրախային համայնքներում հանրային ծառայությունների մատուցման հետ կապված իրավիճակի խորքային հետազոտության արդյունքում (ցուցիչների ձևակերպման մանրամասն մեթոդաբանությունը ներկայացված է սույն ուսումնասիրության շրջանակում անցկացված ելակետային գնահատման զեկույցում):

*Համայնքային գնահատման քարտերով քննարկումներ (ՀԳՔՔ)*

ՀԳՔՔ-ներ անց են կացվել այն ցուցիչների հիման վրա, որոնք մշակվել են սույն ուսումնասիրության նպատակներից ելնելով՝ գնահատելու համար ՀՆԾ-ների կողմից յուրաքանչյուր համայնքին տրամադրվող յուրաքանչյուր հանրային ծառայության և ենթակառուցվածքի վիճակը: Համայնքներում մատուցվող յուրաքանչյուր ծառայության յուրաքանչյուր ցուցիչ գնահատվել է «1-ից 5» սանդղակով* (որտեղ «1»-ը համապատասխանում էր «շատ վատ», իսկ «5»-ը՝ «շատ լավ» գնահատականին):[1]

Յուրաքանչյուր համայնքում անցձ են կացվել գնահատման երկու զուգահեռ վարժություններ. մեկը՝ ծառայություններից օգտվողների (այդ թվում՝ կին բնակիչների, ֆերմերների, ուսուցիչների, տաքսու վարորդների և այլոց) հետ, իսկ մյուսը՝ ծառայություն մատուցողների (տեղական ինքնակառավարման մարմինների և ՀՆԾ նախաձեռնող խմբի ներկայացուցիչների) հետ, որոնց շրջանակում խմբերից յուրաքանչյուրն առաջարկված ցուցիչների հիման վրա գնահատական է տվել յուրաքանչյուր ծառայությանը: Այնուհետև անցկացվեց մի համատեղ հանդիպում՝ համեմատելու երկու գնահատումների արդյունքները, գեներացնելու վերջնական գնահատումը և քննարկելու ծառայությունների մատուցմանն առնչվող մտահոգությունները՝ կապված ծառայությունների մատուցման այն ասպեկտների հետ, որոնք ստացել են «5»-ից ցածր գնահատական:

Զուգահեռ քննարկումների վարումը համատեղ իրականացվում էր ծրագրի փորձագետի և մի զրուցավարի կողմից, որոնց նշումներ կատարելու հարցում օժանդակում էին ՀԳՔ համար պատասխանատու դաշտային աշխատակիցները: Յուրաքանչյուր համայնքում հետազոտող փորձագետի կողմից անց է կացվել մի համատեղ հանդիպում: Ընդհանուր առմամբ՝ 102 անձինք

[1] Բացառությամբ մեկ ցուցիչի, որը գնահատվել է հակառակ տրամաբանությամբ (Գյուղատնտեսական ծառայություններ)՝Չմշակվող հողատարածքների առկայություն: Այս ցուցիչի դեպքում որքան ցածր է գնահատականը, այնքանով տվյալ համայնքում ավելի քիչ են բերրի հողերը, որոնք ինչ-որ պատճառով (կամ գյուղատնտեսական մեքենաասարքավորումների բացակայություն կամ այլ պատճառ) չեն մշակվում:

(ծառայություններից օգտված 41 հոգի և ծառայություն մատուցած 61 հոգի) են մասնակցել հինգ քննարկումներում (ընդ որում՝ նրանցից 44-ը կանայք էին): ՀԳՔ արդյունքները և հարցման արդյունքներն ըստ ցուցիչների ներկայացված են Հավելված 2-ում-ում:

*Հարցում*

Այս հետազոտության համար կիրառվել է հարցման մեթոդաբանություն՝ պահպանելով ելակետային գնահատման ընթացքում օգտագործված շրջանակը: ՀԳՔ-ներից հետո տեղացի բնակիչների շրջանում անց է կացվել հարցում՝ գնահատելու հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների բաղադրիչների առումով տնային տնտեսությունների գոհունակության աստիճանը (յուրաքանչյուր համայնքում ՀՆԾ-ների իրականացման և ՀԳՔ գործընթացում օգտագործված ցուցիչների հիման վրա: Հետազոտության համար կիրառվել է ստրատիֆիկացված (շերտավոր) պատահական ընտրանքի մեթոդաբանություն՝ համամասնական բաշխմամբ, ինչը թույլ է տվել ընտրել ներկայացուցչական ընտրանք յուրաքանչյուր բնակավայրի բնակչության համար: Հինգ բազմաբնակավայր համայնքներում անց է կացվել թվով 379 հարցազրույց՝ ըստ մարզերի հետևյալ բաշխվածությամբ. 147 (38.8%)՝ Վայոց ձորում, և 232 (61.2%)՝ Սյունիքում: Ընտրանքի միավորները որոշարկվել են 5% վստահության միջակայքի և 95% վստահության մակարդակի կիրառմամբ: Կիրառվել է ընտրանքի համամասնական բաշխման մեթոդաբանություն՝ յուրաքանչյուր բնակավայրում հարցվողների քանակի որոշման նպատակով (տե՛ս Աղյուսակ 1 և Աղյուսակ 2):

### ԱՂՅՈՒՍԱԿ 1 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԸՆՏՐԱՆՔ

| մարզ | Բազմաբնակավայր համայնք | համայնքներ | բնակչություն | տոկոս | ընտրանքի բաշխում |
|---|---|---|---|---|---|
| Սյունիք | Մեղրի 10,931 N=37% (141) | Մեղրի | 4,542 | 42% | 58 |
| | | Ագարակ | 4,284 | 39% | 57 |
| | | Կարճևան | 226 | 2% | 3 |
| | | Շվանիձոր | 278 | 3% | 3 |
| | | Վահրավար | 35 | 0% | 0 |
| | | Գուդեմնիս | 35 | 0% | 0 |
| | | Լիճք | 114 | 1% | 1 |
| | | Տաշտուն | 100 | 1% | 1 |
| | | Լեհվազ | 644 | 6% | 9 |
| | | Ալվանք | 293 | 3% | 4 |
| | | Վարդանիձոր | 190 | 2% | 2 |
| | | Նռնաձոր | 144 | 1% | 2 |
| Սյունիք | Գորայք 1,822 N=6% (23) | Գորայք | 493 | 27% | 6 |
| | | Սպանդարյան | 452 | 25% | 6 |
| | | Սառնակունք | 504 | 28% | 6 |
| | | Ծղուկ | 373 | 20% | 5 |
| Սյունիք | Տեղ 5,659 N=19% (72) | Տեղ | 2,287 | 40% | 29 |
| | | Քարաշեն | 494 | 9% | 6 |
| | | Կոռնիձոր | 1,040 | 18% | 13 |
| | | Խնածախ | 854 | 15% | 10 |
| | | Վաղատուր | 398 | 7% | 5 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Վայոց Ձոր | Ջերմուկ 7,187 N=24% (91) | Խոզնավար | 400 | 7% | 5 |
| | | Արավուս | 186 | 3% | 2 |
| | | Jermuk | 4,400 | 61% | 56 |
| | | Կեչուտ | 950 | 13% | 12 |
| | | Գնդեվազ | 776 | 11% | 10 |
| | | Կարմրաշեն | 289 | 4% | 4 |
| | | Հերհեր | 772 | 11% | 10 |
| Վայոց Ձոր | Զառիթափ 4,171 N=14% (53) | Զառիթափ | 1,515 | 36% | 21 |
| | | Արտավան | 256 | 6% | 3 |
| | | Բարձրունի | 392 | 9% | 5 |
| | | Գոմք | 241 | 6% | 3 |
| | | Խնձորուտ | 520 | 12% | 5 |
| | | Մարտիրոս | 599 | 14% | 8 |
| | | Նոր Ազնաբերդ | 148 | 4% | 3 |
| | | Սարավան | 308 | 7% | 4 |
| | | Սերս | 192 | 5% | 2 |
| **Բնակչության ընդհանուր թիվ** | | | 29,770 | | |
| **Ընտրանքի ընդհանուր բաշխում** | | | 379 | | |

ԱՂՅՈՒՍԱԿ 2 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԸՆՏՐԱՆՔ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎ

| Մարզ | Համայնք | Բնակչություն | Ընտրանքի բաշխում ըստ համայնքի |
|---|---|---|---|
| **Վայոց Ձոր** | Ջերմուկ | 7,187 | 92 |
| **Վայոց Ձոր** | Զառիթափ | 4,171 | 54 |
| **Սյունիք** | Գորայք | 1,822 | 23 |
| **Սյունիք** | Մեղրի | 10,931 | 140 |
| **Վայոց Ձոր** | Տեղ | 5,659 | 70 |
| | | 29,770 | 379 |

**Ընտրանքի որոշում. բնակչություն՝ 29,770 վստահության մակարդակ՝ 95% վստահության միջակայք՝ 5%**

Հարցումն անց են կացրել դաշտային աշխատողները (զրուցավարներ), որոնք ծրագրի հետազոտողի կողմից վերապատրաստվել էին հարցման ընտրանքի կազմման մեթոդաբանության, գործիքների, հարցվողի համաձայնության ընթացակարգի, տարածքների քարտեզագրման, հարցման մասնակիցների ընտրության և հարցման կազմակերպման ռազմավարության թեմաներով։ Զրուցավարների կողմից անց է կացվել դեմ առ դեմ հարցազրույցներով հարցում՝ օգտագործելով հարցման տպագիր ուղեցույցներ։ Տվյալների մուտքագրումն իրականացվել է նրանց կողմից՝ օգտագործելով «Google Drive» առցանց հարցաթերթիկ։ Արդյունքները վերլուծության են ենթարկվել «ՀՏՎԾՎՓ» [SPSS] ծրագրի

հաճախականությունների և փոփոխականների խաչաձև վերլուծությունների կիրառմամբ: Տե՛ս Հավելված 1-ը՝ հարցման հարցաթերթիկին ծանոթանալու համար:

*Հետազոտության մասնակիցների ժողովրդագրական տվյալներ*

Հարցվողների միջին[2] տարիքը կազմել է 44: Հարցման մասնակիցների ընդհանուր քանակից (N=379) 223-ը (58.8%) կանայք են, իսկ 155-ը (40.9%)՝ տղամարդիկ (ինչը հարցվողների հավասար բաշխվածության մի փոքր բարելավված ցուցանիշ է՝ ԵԳ համեմատությամբ): Հարցման մասնակիցների մեծամասնությունն ավարտել է որևէ հանրակրթական հաստատություն և հիմնականում հանդիսանում են՝ տնային տնտեսուհիներ, գործազուրկներ, ֆերմերներ և ուսուցիչներ: Անհատական պատասխանները, որոնք ստացվել են *«այլ տեսակի»* ներքո, ներառել են վաճառքի գծով ղեկավար, համակարգչային օպերատոր, բժիշկ կամ բուժքույր, զինակոչիկ, ոստիկանության ծառայող, էլեկտրոմեխանիկ, ճարտարագետ, վարորդ, խոհարար, շինարար (տե՛ս Աղյուսակ 5 և Աղյուսակ 6):

**ԱՂՅՈՒՍԱԿ 3 ՀԱՐՑՎՈՂՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ**

| | *Հաճախականություն* | *Տոկոս* |
|---|---|---|
| Տարրական դպրոց | 4 | 1.1 |
| Միջնակարգ դպրոց | 155 | 40.9 |
| Ավագ դպրոց | 13 | 3.4 |
| Մասնագիտական կրթություն/ տեխնիկական որակավորում | 106 | 28 |
| Բակալավրի աստիճան | 84 | 22.2 |
| Բակալավրից բարձր ցանկացած աստիճան | 17 | 4.5 |
| Ընդամենը | 379 | 100 |

**ԱՂՅՈՒՍԱԿ 4 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ**

| | **Հաճախականություն** | **Տոկոս (ընդամենը 379-ից)** |
|---|---|---|
| Տնային տնտեսուհի | 73 | 19.2% |
| Գործազուրկ | 43 | 11.3% |
| Գյուղատնտես/ֆերմեր | 29 | 7.6% |
| Ուսուցիչ | 27 | 7.1% |
| Կենսաթոշակառու | 25 | 6.5% |
| Տնտեսագետ/գործարար | 22 | 5.8% |
| Ուսանող | 21 | 5.5% |
| Անաշխատունակ | 10 | 2.6% |
| Այլ | 34 | 8.9% |
| Պատասխան չի տրվել (բացակայել է) | 95 | 25% |
| Ընդամենը | 379 | --- |

[2] **median: 42, mode: 32.*

## Ամփոփիչ (եզրափակիչ) գնահատման սահմանափակումները

Ինչպես ԵԳ դեպքում, ԱԳ հիմնական սահմանափակումը դրա իրականացման ժամանակացույցն էր (2019 թ. մարտ-ապրիլ)։ Այսուհանդերձ, տվյալ դեպքում սահմանափակումը պայմանավորված էր ԱԳ իրականացնելու անհրաժեշտությամբ՝ ելնելով ՀՆԾ-ների հիմնական ծրագրի արտաքին գնահատման ու հաշվետվության ներկայացման նպատակներից։ Եթե պայմանները թույլ տային, գերադասելի կլիներ ԱԳ իրականացնել նրանից հետո, երբ բոլոր ծրագրային միջամտությունները համայնքներում ավարտված կլինեին, և ավելի շատ ժամանակ կհատկացվեր բնակիչներին՝ պարզելու նոր ծառայությունների ու ենթակառուցվածքների առկայության ազդեցությունը։ Մեկ այլ սահմանափակում է եռակի համադրման (տրիանգուլյացիա, որը հնարավորություն կտար հստակեցնել տվյալները) համար հատկացված ժամանակի սղությունը։ Օրինակ՝ համայնքներից մեկում մի առանձին ծառայությունից քաղաքացիների գոհունակության մակարդակը ՀԳՔ քննարկման արդյունքում գնահատված է ավելի բարձր, սակայն ավելի ցածր է հարցման արդյունքներով։ Նմանատիպ դեպքերում երրորդ, հստակեցնող մեթոդի կիրառումը կօգներ, սակայն դա իրագործելի չէր ժամանակային սահմանափակման պատճառով։

## Հետազոտության արդյունքները

### Համայնքներում ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների գնահատում

Ստորև բերված վերլուծությունը ներկայացնում է յուրաքանչյուր համայնքում բարելավման յուրաքանչյուր ծրագրի գնահատումը: Արդյունքները վեր են հանում քաղաքացիների գոհունակության միջին ՀԳՔ ցուցանիշներ և հարցման միջոցով գեներացված՝ քաղաքացիների գոհունակության վերաբերյալ տվյալների միջին մակարդակ: Արդյունքները ստացվել են պատասխանի երկու կատեգորիաների համակցումից՝ «որոշ չափով բավարարված» և «շատ բավարարված», և դիտարկվում են ԵԳ հետ համեմատությամբ: Համաձայն ԵԳ տվյալների՝ բոլոր ծառայությունների վերաբերյալ քաղաքացիների գոհունակության տոկոսային ցուցանիշը, ներառյալ կանանց շրջանում, կազմել է 43%: ԱԳ ցույց է տալիս արդյունքի բարելավում. 52.7%: Չորս ծառայությունների գծով քաղաքացիների գոհունակության ընդհանուր քանակների համար տե՛ս ստորև ներկայացված Աղյուսակ 5-ը:

АГЅ

ԱՂՅՈՒՍԱԿ 5 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | տվյալ հարցին պատասխան տրամադրած հարցվողների ընդհանուր թիվը | %-ը բոլոր հարցվողների նկատմամբ (N=379) | բնակիչների ընդհանուր թիվը, ովքեր գոհ են տվյալ ծառայությունից |
|---|---|---|---|
| միջբնկվ. Ճանապարհների սպասարկում | 338 | 47.3% | 160 |
| միջբնկվ. տրանսպորտային կապի ապահովում | 346 | 51.4% | 178 |
| Գյուղատնտեսական ծառայությունների հասանելիություն | 234 | 34.1% | 80 |
| աղբահանություն | 357 | 78.1% | 279 |
| *բնակիչների գոհունակություն (ծառայությունները համակցված)* | | 52.7% | -- |

# ՋԵՐՄՈՒԿ

### Ա. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ. ՄԻՋԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ 3 (ՀԳՔ), ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ՝ 21.8%

Հետազոտությունը ցույց է տալիս որոշ չափով դրական փոփոխություն (21.8%) ճանապարհային ենթակառուցվածքների վերաբերյալ քաղաքացիների գոհունակության հարցում՝ ԵԳ ցուցանիշի (18.7%) համեմատությամբ: Օգտագործողների և ծառայություն մատուցողների հետ քննարկումները մատնանշում են, որ բազմաբնակավայր համայնքի մի մասն օգտվում է լավ որակի ճանապարհներից, մինչդեռ մյուս մասը՝ հակառակը: ՀԳՔ-ները մատնանշում են տեսանելի բարելավում ըստ բոլոր այն ցուցիչների, որոնք գնահատում են ճանապարհային ենթակառուցվածքների պայմանները՝ բացառությամբ միջհամայնքային ճանապարհներին ջրահեռացման համակարգի որակի: Ջրահեռացման համակարգի հետ կապված իրավիճակն իրականում վատթարացել է: Համայնքում մինչ օրս միջհամայնքային ճանապարհներին ուղղությունները ցույց տալու համար տեղադրված է բնակավայրի «Djermuk» սխալ անվանմամբ նշանը:

Ելակետային գնահատման արդյունքները մատնանշել էին միջհամայնքային հաղորդակցության դժվարություններ՝ Ջերմուկում ճանապարհների վատ վիճակի պատճառով, հատկապես այն ճանապարհների, որոնք տանում են դեպի գյուղական համայնքներ: Ամփոփիչ գնահատումը ցույց է տալիս մի փոքր բարելավված արդյունքներ քաղաքացիների գոհունակության առումով: Ճանապարհային ենթակառուցվածքների գնահատման ընդամենը վեց ցուցիչներից չորս գծով արձանագրվել է տպավորիչ բարելավում: Սա ցույց է տալիս ՀԳՔ քննարկումների մասնակից բնակիչների և համայնքի անդամների շրջանում գոհունակության աստիճանի փոփոխություն: Միջհամայնքային ճանապարհների որակի ներկա և նախկին ՀԳՔ գնահատականների համեմատական գծապատկերային ցուցանիշների համար տե՛ս Գծապատկեր 1-ը: Աղյուսակ 5-ը նույն ցուցանիշները ներկայացնում է թվային արժեքների տեսքով:

**ԳԾԱՊԱՏԿԵՐ 1 ՋԵՐՄՈՒԿ. ՄԻՋԲՆԿՎ. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ. ՀԳՔՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ՝**

**ԵԳ (1)** **ԱԳ (2)**



ԱՂՅՈՒՍԱԿ 6 ՁԵՐՄՈՒԿ՝ ՀԳՔ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ՄԻՋԲՆԿՎ. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ)

| | ԵԳ 2017 | ԱԳ 2019 |
|---|---|---|
| Միջբնակավայրային ճանապարհների մակերևույթի վիճակ | 2 | 3 |
| Ջրահեռացման համակարգի առկայություն-որակ միջբն. ճ-ի համար | 3 | 0 |
| Միջբնակավայրային ճանապարհների մաքրման մեխանիզմների առկայություն, ձնամաքրում, ճանապարհների օգտագործման հնարավորություն կլոր տարի, հեշտ անցանելիություն, ճանապարհների վերանորոգման, մաքրման մեքենաներ իառկայություն (տեսակ/որակ) | 0 | 4 |
| Ընդհանուր միջբնակավայրային ճանապարհների անվտանգություն (նախազգուշական նշաններ, ժայռեր, քարաթափում) | 1 | 4 |
| Միջբնակավայրային երկայնքով ուղղությունների և բնակավայրերի անունների նշման առկայություն և ճշգրտություն | 1 | 4 |
| Միջբնակավայրային ճանապարհների գծերի առկայություն և որակ | 1 | 3 |

## Բ. ՏՐԱՆՍՊՈՐՏ. ՄԻՋԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ 3.1 (ՀԳՔ), ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ՝ 44.5%

Հանրային տրանսպորտը դեռևս բացակայում է մի շարք համայնքներում (օրինակ՝ դեպի Հերհեր և Կարմրաշեն), և թվում է, որ զգալիորեն նվազել այն մարդկանց քանակը, որոնք նշել են, որ «որոշ չափով բավարարված» կամ «շատ բավարարված» են հանրային տրանսպորտի ծառայություններով: ԵԳ (60.5%) համեմատությամբ՝ այստեղ իրավիճակը փաստորեն վատթարացել է: Ներկայում՝ հարցման մասնակիցների 44.5%-ը բավարարված է: Հանրային տրանսպորտի պայմանների վերաբերյալ ընկալումները կարծես թե նմանատիպ ձևով համայնքում բաժանվում են երկու մասի: Քաղաքացիները նշում են, որ Արփա գետի աջ ափին գտնվող բնակելի հատվածում իրավիճակը գոհացնող է, մինչդեռ ձախ ափին այն զգալիորեն ավելի վատթար է: ՀԳՔ շուրջ քննարկումները հաստատում են հարցման արդյունքները: Ցուցանիշները կամ վատթարացել են, կամ մնացել են նույնը: Միակ ցուցիչը, որը գնահատվել է «5», մատուցված ծառայությունների որակն է, ներառյալ՝ վերաբերմունքի պայմանավորող գործոնները: Գնահատման քարտերի արդյունքների համեմատության համար տե՛ս Գծապատկեր 1-ը և Աղյուսակ 6-ը:

### ԳԾԱՊԱՏԿԵՐ 2 ՋԵՐՄՈՒԿ. ՄԻՋՔՆԿՎ. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ. ՀԳՔՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ՝

ԵԳ (1)




ԱԳ (2)




### ԱՂՅՈՒՍԱԿ 7 ՋԵՐՄՈՒԿ՝ ՀԳՔ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ՄԻՋՔՆԿՎ. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

| | ԵԳ 2017 | ԱԳ 2019 |
|---|---|---|
| Անհրաժեշտ միջհամայնքային երթուղիների առկայություն | 2 | 3 |
| Հանրային (մինի) ավտոբուսների առկայությունը միջբնակավայրային երթուղիներում ծառայելու համար | 2 | 3 |
| Առկա հանրային (մինի) ավտոբուսների վիճակը | 4 | 3 |
| Առկա հանրային մինի (ավտոբուսների) ծառայությունների որակը, ծառայություն մատուցողների վերաբերմունքն օգտվողների նկատմամբ | 5 | 5 |
| Ժամանակացույցի հարմարավետություն, կլոր տարի սպասարկում (օրվա և տարվա գրաֆիկ) | 4 | 3 |
| Անվտանգությունը տր-ի օգտ-ա վայրերում (անցման նշաններ, ճ-ի լայնություն) | 5 | 2 |
| Օգտվողների ֆինանսական հարմարավետություն | 4 | 4 |
| Կանգառների առկայություն | 3 | 3 |
| Կանգառների որակ (նստատեղերի առ-ն և որակ, արևից/անձրևից պաշտպանություն, մաքրություն) | 3 | 2 |

### Գ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ. ՄԻՋԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ 3.6 (ՀԳՔ), ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ՝ 16.3% (ՀԱՐՑՈՒՄ)

Ելակետային գնահատման (19.8%) համեմատությամբ՝ Ամփոփիչ գնահատումն արձանագրել է քաղաքացիների գոհունակության ավելի ցածր մակարդակ՝ կապված գյուղատնտեսական ծառայությունների հետ (16.3%)։ Խոշորացման ու համայնքային ներդրումների ծրագրերի վերաբերյալ մտորելու ընթացքում հարցման մասնակիցները նշել են, որ խոշորացումից առաջ, օրինակ, իրենց գյուղական համայնքում առկա էին գյուղատնտեսական մեքենաներ, մինչդեռ խոշորացումից հետո այդ մեքենաները տեղափոխվել են Ջերմուկ համայնքային կենտրոն։ Սա էլ ավելի է դժվարացրել մեքենաների օգտագործումը։ Այս խնդիրը վեր է հանվել նաև ԵԳ ընթացքում, և թվում է, որ հանրային ընկալումներում այս առումով որևէ փոփոխություն տեղի չի ունեցել՝ նույնիսկ ծրագրային միջամտություններից հետո։ Սեփական համայնքում գյուղատնտեսական ծառայությունների առումով քաղաքացիների գոհունակության ընդհանուր գնահատականը նույնպես անկում է արձանագրել։ ԵԳ-ի ընթացքում բնակիչները բարձրաձայնել էին իրենց այն սպասումների մասին, որ մեքենաներիգները կկարգավորվեն՝ հաշվի առնելով միջամտությունն ու համայնքին տրամադրվող աջակցությունը։ Սույն հետազոտության արդյունքները նույնն են մատնանշում։ Բնակիչները շարունակում են բողոքել համայնքի գյուղատնտեսական մեքենաներիվարձակալության արժեքից, որը չի տարբերվում մասնավոր մատակարարների առաջարկած վարձակալման գներից։ Այսուհանդերձ, հետաքրքիր է, որ ՀԳՔ քննարկումները վեր են հանել տարբերվող արդյունքներ։ Ըստ բոլոր ցուցիչների ստացվել են ավելի բարձր գնահատականներ, քան ԵԳ ժամանակ։ Երկու ցուցիչներ գնահատվել են հատկապես բարելավված. մասնավորապես՝ *«նորոգման ծառայությունների որակը»* (տնողությունը, գոհունակությունն արդյունքներից) և *«ֆերմերների մատուցվող ծառայությունների արդարացիությունը»* (առկայությունը տվյալ ծառայությունների կարիքն ունեցող բոլոր ֆերմերների համար)։ Ամփոփիչ գնահատման ՀԳՔ քննարկումները ցույց տվեցին, որ առկա է տեղական մակարդակում աշխատակիցների կարողությունների բարելավման կարիք։ ԵԳ և ԱԳ ընթացքում ըստ ցուցիչների ստացված գնահատականների համեմատության համար տե՛ս Գծապատկեր 3-ը և Աղյուսակ 7-ը։

### ԳԾԱՊԱՏԿԵՐ 3 ՋԵՐՄՈՒԿ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԳՔՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ՝

ԵԳ (1)




ԱԳ (2)




### ԱՂՅՈՒՍԱԿ 8 ՋԵՐՄՈՒԿ՝ ՀԳՔ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

| | ԵԳ 2017 | ԱԳ 2019 |
|---|---|---|
| Համայնքում անհրաժեշտ գղտն. մեքենաների առկայություն (մեք-ի տեսակ) | 2 | 4 |
| Համայնքում գոյություն ունեցող գղտն. մեքենաների որակ | 2 | 4 |
| Գղտն. Մեքենաների հասանելիություն գղտն. սեզոնի ժամանակ | 2 | 4 |
| Ֆինանսական հարմրվտ-ն (վարձակալման հնար-ն, գներ) | 1 | 3 |
| Գղտն. մեքենաների տեխնիկական սպասարկման առկայություն և որակ տարբեր անհրաժեշտ մեքենաների տեսակների համար՝ տարածք, վերանորոգման կայան., գործիքներ, անձնակազմ | 0 | 3 |
| Չմշակված հողերի առկայություն | 4 | 5 |
| Մատուցվող վերանորոգման ծառայությունների որակը և տևողությունը, արդյունքների հետ բավարարվածություն | 0 | 3 |
| Գյուղատնտես/այգեգործներին մատուցվող ծառայությունների հավասարությունը (մատչելիությունը և առկայությունը բոլոր ֆերմերների համար) | 1 | 4 |
| Տեխնիկական ենթկռցվծք՝ գործիքների առկայություն՝ բոլոր մեքենաների տեսակների համար | 1 | 3 |

## Դ. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ. ՄԻՋԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ 3.6 (ՀԳՔ), ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ՝ 68.5% (ՀԱՐՑՈՒՄ)

Ըստ տեղացի բնակիչների, համայնքում գլխավոր հիմնախնդիրը դեռևս մնում է համայնքի համար հոգ տանելու մշակույթի զարգացման անհրաժեշտությունը, որը սկսվում է աղբահանությունից: Ասում են, որ տեղացիներն ունեն, օրինակ, պլաստիկ նյութերի հավաքման համար նախատեսված աղբամանների օգտագործման մասին գիտելիքի պակաս (բնակիչներն այդ աղբամաններն օգտագործում են աղբի բոլոր տեսակների համար): Սկզբում համայնքում տեղադրվեցին պլաստիկ բաժանմունքներով աղբամաններ, սակայն այնուհետև հանվեցին՝ սխալ օգտագործման հետևանքով: Ըստ Ամփոփիչ գնահատման արդյունքների, աղբահանության վերաբերյալ քաղաքացիների գոհունակության մակարդակը (68.5%) մի փոքր բարձրացել է՝ ԵԳ գնահատականի (67.1%) համեմատ: ՀԳՔ արդյունքները, այդուամենայնիվ, ցույց են տալիս բարելավված պատկեր: Ութ ցուցիչներից յոթի գծով արձանագրվել են բարելավված արդյունքներ: «Աղբամանների առկայություն և որակ» ցուցիչներով արձանագրվել է գնահատման դրական շարժ: Միակ ցուցիչը, ըստ որի ստացվել է ավելի ցածր գնահատական, քան Ելակետային գնահատման ժամանակ, աղբահանության ու աղբի մշակման անվտանգության վերաբերյալ համայնքի ընկալումն է: Ըստ ցուցիչների ստացված արդյունքների համար տե՛ս ստորև ներկայացված գծապատկերի և աղյուսակի տվյալները:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 4 ՋԵՐՄՈՒԿ. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ. ՀԳՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ՝

ԵԳ (1)




ԱԳ (2)



ԱՂՅՈՒՍԱԿ 9 ՀԳՔ  ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ)

| | ԵԳ 2017 | ԱԳ 2019 |
|---|---|---|
| Համայնքում աղբամանների առկայություն | 2 | 4 |
| Աղբամանների որակ/պլաստիկի համար առկա բաժանում | 0 | 3 |
| Աղբի հավաքման կետերի/վայրերի սանիտարական պայմանները | 2 | 3 |
| Աղբատար/յուրաքանչյուր այլ աղբը հավաքող/ մեքենաների առկայություն և որակ | 2 | 4 |
| Աղբի հավաքման կետերից ժամանակացույցի և աղբի հեռացման հաճախականության հարմարվետություն | 3 | 4 |
| Ծառայության ֆինանսական հարմարավետություն | 4 | 5 |
| Ծառայության մատուցողների վերաբերմունքն օգտվողների նկատմամբ/ եթե կիրառելի է | 0 | 4 |
| Աղբի օգտագործման և անվտանգության հանդեպ հանրայի ընկալումներ և վստահություն | 3 | 2 |

# ՋԱՌԻԹԱՓ

## Ա. ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ. ՄԻՋԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ 2.8 (ՀԳՔ), ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ՝ 24.1% (ՀԱՐՑՈՒՄ)

Ջառիթափ համայնքում գնահատվել է երեք ծառայություն: Ընդհանուր առմամբ՝ քաղաքացիներն արձանագրել են հանրային տրանսպորտի վերաբերյալ գոհունակության ավելի բարձր մակարդակ (24.1%), քանի Ելակետային գնահատման ժամանակ (14.8%): ԵԳ արդյունքները ցույց տվեցին, որ քաղաքացիներն ակնկալում են տրանսպորտային ծառայությունների բարելավում, այդ թվում՝ որպեսզի երեխաներն ի վիճակի լինեն հաճախել արտադասարանային պարապմունքների (երաժշտություն, մարզաձևեր): ԱԳ ՀԳՔ քննարկումները վեր հանեցին այն, որ համայնքում տրանսպորտը հիմնականում ծառայում է ուսուցիչներին ու երեխաներին: Միևնույն ժամանակ՝ կարծես թե բնակիչները չունեն տեղեկություններ այն մասին, թե արդյոք կարող են օգտվել տեղական տրանսպորտից: Սրանից բխող փաստարկն այն է, որ տրանսպորտի չվացուցակը հարմարեցվում է երեխաների և ուսուցիչների ժամանակացույցին, ինչը դժվարացնում է բնակիչների կողմից տրանսպորտի օգտագործումը: Համայնքում ամենից հաճախ օգտագործվող տրանսպորտային միջոցների թվում են անձնական ավտոմեքենաներն ու տաքսիները: *Ավտոբուսի կանգառների առկայության* և *որակի* հետ կապված իրավիճակը գնահատվել է որպես ավելի վատ, քան ԵԳ ժամանակ: Ըստ մնացյալ ցուցիչների գրանցվել են բարելավված գնահատականներ:

### ԳԾԱՊԱՏԿԵՐ 5 ՁԱՌԻԹԱՓ. ՄԻՋԲՆԿՎ. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ. ՀԳՔՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ՝

ԵԳ (1)




ԱԳ (2)




### ԱՂՅՈՒՍԱԿ 10 ՁԱՌԻԹԱՓ՝ ՀԳՔ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ՄԻՋԲՆԿՎ. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

| | ԵԳ 2017 | ԱԳ 2019 |
|---|---|---|
| Անհրաժեշտ միջհամայնքային երթուղիների առկայություն | 2 | 3 |
| Հանրային (մինի) ավտոբուսների առկայությունը միջբնակավայրային երթուղիներում ծառայելու համար | 2 | 3 |
| Առկա հանրային (մինի) ավտոբուսների վիճակը | 2 | 5 |
| Առկա հանրային մինի (ավտոբուսների) ծառայությունների որակը, ծառայություն մատուցողների վերաբերմունքն օգտվողների նկատմամբ | 4 | 4 |
| Ժամանակացույցի հարմարավետություն, կլոր տարի սպասարկում (օրվա և տարվա գրաֆիկ) | 2 | 4 |
| Անվտանգությունը տր-ի օգտ-ա վայրերում (անցման նշաններ, ճ-ի լայնություն) | 2 | 2 |
| Օգտվողների ֆինանսական հարմարավետություն | 3 | 4 |
| Կանգառների առկայություն | 2 | 1 |
| Կանգառների որակ (նստատեղերի առ-ն և որակ, արևից/անձրևից պաշտպանություն, մաքրություն) | 1 | 0 |

## Բ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՄԻՋԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ 3.3 (ՀԳՔ), ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ՝ 37% (ՀԱՐՑՈՒՄ)

Զառիթափ համայնքում գյուղատնտեսական ծառայությունների առումով արձանագրվել են բարելավված արդյունքներ։ Թե՛ հարցման, թե՛ ՀԳՔ տվյալները ցույց են տալիս քաղաքացիների գոհունակության մակարդակի բարելավում, որը 2017 թվականին եղել է 29.7%՝ ԱԳ արդյունքից (37%) 7 տոկոսային կետով ավելի ցածր։ Զառիթափում հարցման մասնակիցների մեծամասնությունը տեղյակ է իրենց համայնքում առկա գյուղատնտեսական նոր մեքենաներիմասին, որոնք, ըստ բնակիչների, այդուհանդերձ բավարար չեն։ ԵԳ ընթացքում քաղաքացիների շրջանում արձանագրված հիմնական բողոքներից մեկը գյուղատնտեսական մեքենաների սահմանափակ հասանելիությունն է եղել, հատկապես՝ ավելի փոքր համայնքները ներկայացնող ֆերմերների համար՝ ի տարբերություն սեփականատերերի ազգականների ու նրանց մերձավոր շրջապատի համար առկա անսահմանափակ հասանելիության։ Թվում է, որ իրավիճակը մի փոքր բարելավվել է, քանի որ բնակիչները նշում են համայնքում «ավելի շատ արդարության» առկայության մասին։ Նոր մեքենաներիառկայությունը նպաստել է դրանց օգտագործման գների նվազեցմանը, սակայն դեռևս մտահոգիչ է մեքենաների հասանելիությունը՝ կապված առկա սարքավորումների քանակի հետ։ ՀԳՔ քննարկումները բացահայտում են բարելավված արդյունքներ ըստ բոլոր ցուցիչների։

### ԳԾԱՊԱՏԿԵՐ 6 ԶԵՐՄՈՒԿ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԳՔՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ՝

ԵԳ (1)




ԱԳ (2)



ԱՂՅՈՒՍԱԿ 11 ՋԱՌԻԹԱՓ՝ ՀԳՔ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

| | ԵԳ 2017 | ԱԳ 2019 |
|---|---|---|
| Համայնքում անհրաժեշտ գղտն. մեքենաների առկայություն (մեք-ի տեսակ) | 2 | 2 |
| Համայնքում գոյություն ունեցող գղտն. մեքենաների որակ | 2 | 3 |
| Գղտն. Մեքենաների հասանելիություն գղտն. սեզոնի ժամանակ | 1 | 2 |
| Ֆինանսական հարմրվտ-ն (վարձակալման հնար-ն, գներ) | 3 | 4 |
| Գղտն. մեքենաների տեխնիկական սպասարկման առկայություն և որակ տարբեր անհրաժեշտ մեքենաների տեսակների համար՝տարածք, վերանորոգման կայան., գործիքներ, անձնակազմ | 2 | 4 |
| Չմշակված հողերի առկայություն | 3 | 4 |
| Մատուցվող վերանորոգման ծառայությունների որակը և տևողությունը, արդյունքների հետ բավարարվածություն | 1 | 4 |
| Գյուղատնտես/այգեգործներին մատուցվող ծառայությունների հավաստրությունը (մատչելիությունը և առկայությունը բոլոր ֆերմերների համար) | 1 | 4 |
| Տեխնիկական ենթկոցվծք՝գործիքների առկայություն՝բոլոր մեքենաների տեսակների համար | 1 | 3 |

## Գ. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ. ՄԻՋԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ 3.6 (ՀԳՔ), ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ՝ 74% (ՀԱՐՑՈՒՄ)[3]

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս դրական պատկեր՝ իրենց համայնքում աղբահանության վերաբերյալ քաղաքացիների գոհունակության տեսանկյունից (74%): Բնակիչները չունեն գիտելիք այն մասին, թե ինչ է տեղի ունենում հավաքված աղբի հետ: Բավարարվածության ընդհանուր մակարդակը բարձր է, սակայն Ջառիթափ համայնքում աշխատած զրուցավարների դիտարկումների «մեխը» հստակորեն այն էր, որ աղբի պատշաճ մշակման վերաբերյալ ավելի շատ տեղեկատվության ու կրթության կարիք կա գյուղերում: Դաշտային աշխատանքների ընթացքում ընդգծված հիմնախնդիրն այն էր, որ աղբամանները (կոնտեյներները) չունեն կափարիչ, ինչը հանգեցնում է համայնքում սանիտարական պայմանների վատթարացման: Մասնակիցները նշել են, որ սովորաբար աղբամանները տեղադրված են լինում իրարից շատ հեռու: Սրա բացատրությունն այն է եղել, որ բնակիչները բողոքել են աղբամաններն իրենց տների մերձակայքում տեղադրելուց, ինչի պատճառով ներկայում դրանք միմյանցից բավական մեծ հեռավորության վրա են տեղադրված: Արձանագրվել են նաև մտահոգություններ առ այն, որ նախքան համայնքում աղբամանների տեղադրումը, այն ավելի մաքուր էր, քանի որ աղբատար ավտոմեքենան աղբը հավաքում էր տներից, մինչդեռ այժմ այն տարածվում է համայնքի տարածքով մեկ: Միևնույն ժամանակ՝ ՀԳՔ-ները հուշում են, որ Խորհրդային ժամանակներից մնացած աղբահավաք մեքենաները գտնվում են ծայրահեղ վատ վիճակում: Չնայած այն հանգամանքին, որ կարիք կա բարելավել թափոնների

[3]Հետազոտական թիմի և ՀԳՔ մասնակիցների միջև տարաձայնության պատճառով այս ցուցիչը ԵԳ իրականացման ընթացքում չի գնահատվել:

կառավարման (աղբահանության) անվտանգության վերաբերյալ հանրային ընկալումները (ինչպես ընդգծել են դաշտային աշխատանքների մասնակիցները), ընդհանուր առմամբ քաղաքացիները բավարարված են իրենց համայնքում աղբահանության վիճակով: ՀԳՔ քննարկման ընթացքում գնահատված ցուցիչների համար տե՛ս Գծապատկերը և Աղյուսակը ստորև :

### ԳԾԱՊԱՏԿԵՐ 7 ՋԱՌԻԹԱՓ. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ. ՀԳՔՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ՝ ԱԳ (2)




### ԱՂՅՈՒՍԱԿ 12 ՀԳՔ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ)

| | ԱԳ 2019 |
|---|---|
| Համայնքում աղբամանների առկայություն | 3 |
| Աղբամանների որակ/պլաստիկի համար առկա բաժանում | 3 |
| Աղբի հավաքման կետերի/վայրերի սանիտարական պայմանները | 4 |
| Աղբատար/յուրաքանչյուր այլ աղբը հավաքող/ մեքենաների առկայություն և որակ | 3 |
| Աղբի հավաքման կետերից ժամանակացույցի և աղբի հեռացման հաճախականության հարմարվետություն | 4 |
| Ծառայության ֆինանսական հարմարավետություն | 5 |
| Ծառայության մատուցողների վերաբերմունքն օգտվողների նկատմամբ/ եթե կիրառելի է | 5 |
| Աղբի օգտագործման և անվտանգության հանդեպ հանրայի և ընկալումներ և վստահություն | 2 |

# ՄԵՂՐԻ

## Ա. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ. ՄԻՋԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ 3.8 (ՀԳՔ), ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ՝ 79.3% (ՀԱՐՑՈՒՄ)

Մեղրին կարծես թե հաջողված պատմություն է: Ըստ բոլոր ցուցիչների ներկայացված են ավելի բարձր գնահատականներ՝ ԵԳ արդյունքների համեմատ (65.9%): Ամփոփիչ գնահատման արդյունքում արձանագրված՝ քաղաքացիների գոհունակության ընդհանուր մակարդակը կազմել է 79.3%: Բնակիչների կողմից բարձրացված խնդիրների թվում են ջրահեռացման համակարգի «հին» լինելը (ըստ ցուցիչի գնահատումը մնացել է նույն մակարդակի) և հեռավորություններ ցույց տվող ճանապարհային նշանների բացակայությունը: ՀԳՔ-ները, հարցման արդյունքների նմանությամբ, արձանագրել են տեսանելի բարելավում: Քննարկումների արդյունքում ձևավորվել է կամ միևնույն, կամ բարելավված գնահատական (ԵԳ համեմատությամբ: Մեղրիի դեպքում կար լրացուցիչ մեկ ցուցիչ, որը վերաբերում էր ճանապարհային ենթակառուցվածքներին և գնահատում էր Մեղրի տանող այլընտրանքային ճանապարհի որակը, որի գնահատականը 2-ից հասել է 5-ի: Սա նշանակում է դրական արդյունք, որն արձանագրվել է այնպիսի ենթակառուցվածքի բարձր գնահատման շնորհիվ, որի կարևորությունը ճանաչվել է ԵԳ ընթացքում:

### ԳԾԱՊԱՏԿԵՐ 8 ՄԵՂՐԻ. ՄԻՋԲՆԿՎ. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ. ՀԳՔՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ՝

ԵԳ (1)




ԱԳ (2)



ԱՂՅՈՒՍԱԿ 13 ՄԵՂՐԻ. ՀԳՔ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ՄԻՋԲՆԿՎ. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ)

| | ԵԳ 2017 | ԱԳ 2019 |
|---|---|---|
| Միջբնակավայրային ճանապարհների մակերևույթի վիճակ | 4 | 4 |
| Մեղրի ք. Մտնող այլընտրանքային ճանապարհի մակերևույթի վիճակ (ասֆալտի առկայություն/լայնություն, երկարություն) | 2 | 5 |
| Ջրահեռացման համակարգի առկայություն-որակ միջբն. Ճ-ի համար | 3 | 3 |
| Միջբնակավայրային ճանապարհների մաքրման մեխանիզմների առկայություն, ձնամաքրում, ճանապարհների օգտագործման հնարավորություն կլոր տարի, հեշտ անցանելիություն, ճանապարհների վերանորոգման, մաքրման մեքենաներ խառկայություն (տեսակ/որակ) | 2 | 4 |
| Ընդհանուր միջբնակավայրային ճանապարհների անվտանգություն (նախազգուշական նշաններ, ժայռեր, քարաթափում) | 3 | 4 |
| Միջբնակավայրային երկայնքով ուղղությունների և բնակավայրերի անունների նշման առկայություն և ճշգրտություն | 3 | 4 |
| Միջբնակավայրային ճանապարհների գծերի առկայություն և որակ | 2 | 3 |

## Բ. ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ. ՄԻՋԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ 4.2 (ՀԳՔ), ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ՝ 80.7% (ՀԱՐՑՈՒՄ)

Մեղրի համայնքում հանրային տրանսպորտի աշխատանքով քաղաքացիների բավարարվածության մակարդակը, որը գրանցվել էր ելակետային ուսումնասիրության ժամանակ, կազմել էր ընդամենը 8.3%, և այս ցուցանիշը ներկայում հսկայական չափով բարելավվել է (80.7%): Տվյալ դեպքում հարցման արդյունքները նաև հաստատվում են ՀԳՔ-ների կողմից, որոնք ցույց են տալիս բարելավում հանրային տրանսպորտին առնչվող բոլոր ցուցիչների առումով (բացառությամբ ծառայություն մատուցողների վերաբերմունքը): Հիշատակման արժանի է նաև այն, որ յուրաքանչյուր ցուցիչի շուրջ քննարկումների ընթացքում ծառայությունից օգտվողների գնահատականներն ավելի բարձր էին, քան ծառայություն մատուցողներինը:

Միջբնակավայրային երթուղիները սպասարկող հասարակական (միկրո)ավտոբուսների առկայությունը կարծես թե բարելավվել է՝ Ելակետային գնահատման ժամանակ տրված «2» գնահատականից հասնելով «4»-ի՝ վերջնական գնահատման ժամանակ: Թվում է, որ տեղական համայնքը ներկայում գտնվում է տարատեսակ տրանսպորտային երթուղիների «փորձարկման» գործընթացում, որպեսզի ի վիճակի լինի հասկանալու իրավիճակն ու ավտոբուսների աշխատանքային չվացուցակը հարմարացնելու քաղաքացիների կարիքներին: Ճանապարհների անվտանգությունն այն հատվածներում, որտեղ մարդիկ օգտվում են հանրային տրանսպորտից, գնահատվել է «3», ինչը կարծես թե մի փոքր բարելավում է նախկինում տրված «1» գնահատականից: Ցուցիչների գնահատման համար տե՛ս Գծապատկերն ու Աղյուսակը ստորև:

### ԳԾԱՊԱՏԿԵՐ 9 ՄԵՂՐԻ. ՄԻՋԲՆԱԿ. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ. ՀԳՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ՝

ԵԳ (1)




ԱԳ (2)




### ԱՂՅՈՒՍԱԿ 14 ՁԵՐՄՈՒԿ՝ ՀԳՔ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ՄԻՋԲՆԱԿ. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

| | ԵԳ 2017 | ԱԳ 2019 |
|---|---|---|
| Անհրաժեշտ միջհամայնքային երթուղիների առկայություն | 4 | 5 |
| Հանրային (մինի) ավտոբուսների առկայությունը միջբնակավայրային երթուղիներում ծառայելու համար | 2 | 4 |
| Առկա հանրային (մինի) ավտոբուսների վիճակը | 3 | 4 |
| Առկա հանրային մինի (ավտոբուսների) ծառայությունների որակը, ծառայություն մատուցողների վերաբերմունքն օգտվողների նկատմամբ | 5 | 4 |
| Ժամանակացույցի հարմարավետություն, կլոր տարի սպասարկում (օրվա և տարվա գրաֆիկ) | 3 | 4 |
| Անվտանգությունը տր-ի օգտ-ա վայրերում (անցման նշաններ, ճ-ի լայնություն) | 1 | 3 |
| Օգտվողների ֆինանսական հարմարավետություն | 5 | 5 |
| Կանգառների առկայություն | 1 | 4 |
| Կանգառների որակ (նստատեղերի առ-ն և որակ, արևից/անձրևից պաշտպանություն, մաքրություն) | 1 | 5 |

### Գ. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ. ՄԻՋԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ 3.8 (ՀԳՔ), ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ՝ 76.4% (ՀԱՐՑՈՒՄ)

Աղբահանության վերաբերյալ քաղաքացիների գոհունակությունը ցույց է տալիս գրեթե նույն արդյունքը ԱԳ-ի ժամանակ (76.4%), ինչ արձանագրվել էր ԵԳ-ի ժամանակ (76.6%)։ ՀԳՔ քննարկումները մատնանշում են բարելավված արդյունքներ։ Ելակետային գնահատումը վեր էր հանել որոշ չափով մտահոգիչ արդյունքներ՝ կապված աղբի հեռացման, սանիտարական խնդիրների և աղբահանության ու անվտանգության առնչությամբ աղճատված հանրային ընկալումների հետ։ Այս անգամ որևէ նմանատիպ արդյունք չի արձանագրվել։ Համայնքում

արդեն իսկ տեղադրվել են զգալի թվով աղբամաններ, իսկ դրանց մյուս մասն էլ տեղադրման ընթացքում է։ Սա անհրաժեշտ է դարձնում աղբահանության նոր լուծումներ գտնելու անհրաժեշտությունը։ Չնայած այն հանգամանքին, որ Ելակետային գնահատման համեմատությամբ կրկնակի բարելավում արձանագրած երկու ցուցիչներն են՝ *«աղբի հավաքման վայրերի կամ աղբամանների որակը»* և *«համայնքում աղբահանության տրանսպորտային միջոցների առկայությունը և որակը»*, ՀԳՔ-ները վերհանեցին այն, որ համայնքի ներսում կան ճանապարհային վատ պայմաններով այնպիսի հատվածներ, որոնք աղբահավաք մեքենաներին հնարավորություն չեն տալիս կատարելու իրենց աշխատանքը։

### ԳԾԱՊԱՏԿԵՐ 10 ՄԵՂՐԻ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԳՔՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ՝

ԵԳ (1)




ԱԳ (2)




### ԱՂՅՈՒՍԱԿ 15 ՀԳՔ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ)

| | ԵԳ 2017 | ԱԳ 2019 |
|---|---|---|
| Համայնքում աղբամանների առկայություն | 2 | 3 |
| Աղբամանների որակ/պլաստիկի համար առկա բաժանում | 1 | 3 |
| Աղբի հավաքման կետերի/վայրերի սանիտարական պայմանները | 3 | 4 |
| Աղբատար/յուրաքանչյուր այլ աղբը հավաքող/ մեքենաների առկայություն և որակ | 2 | 4 |
| Աղբի հավաքման կետերից ժամանակացույցի և աղբի հեռացման հաճախականության հարմարվետություն | 4 | 4 |
| Ծառայության ֆինանսական հարմարավետություն | 5 | 5 |
| Ծառայության մատուցողների վերաբերմունքն օգտվողների նկատմամբ/ եթե կիրառելի է | 4 | 5 |
| Աղբի օգտագործման և անվտանգության հանդեպ հանրայի նրնկալումներ և վստահություն | 3 | 3 |

## ԳՈՐԱՅՔ

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ. ՄԻՋԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ 2.5 (ՀԳՔ), ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ՝ 26.1%[4] (ՀԱՐՑՈՒՄ)

Գորայք համայնքում արձանագրվել է Ելակետային գնահատման արդյունքին (26%) համանման գնահատական գյուղատնտեսական ծառայությունների վերաբերյալ քաղաքացիների գոհունակության առումով (26.1%) (դրանք ՀՆԾ-ների արդյունքում Գորայքում գնահատված միակ ծառայությունն է)։ Քաղաքացիների գոհունակության վերաբերյալ դաշտային աշխատակիցների տպավորությունները հիմնականում հուշում են, որ մատուցված ծառայություններն արդյունավետորեն չեն օգտագործվել և չեն ծառայել իրենց նպատակին։ Բնակիչների մի զգալի մասը դեռևս չի օգտվել գյուղատնտեսական մեքենաներից, որպեսզի կարողանար կարծիք արտահայտել։ Ամփոփիչ գնահատման ժամանակ կրկին բարձրացվեց գյուղատնտեսական մեքենաների գների ու օգտագործման «արդարացիության» հետ կապված մտահոգությունը։ Գյուղատնտեսական մեքենաների սեփականատերերը բարձր գներ են սահմանում այլոց համար, մինչդեռ համայնքի կողմից հատկացված մեքենաներն օգտագործելու նպատակով գրանցվելու դեպքում մարդիկ չափազանց երկար են սպասում «հերթերում», և մինչ նրանց հերթը հասնում է, դրանք այլևս պետքական չեն լինում։ Հին մեքենաները հասանելի են, մինչդեռ նոր մեքենաները՝ ոչ։ Սպանդարյան և Սառնակունք համայնքների բնակիչները բավական դրական էին արտահայտվում ՀՆԾ-ների վերաբերյալ, մինչդեռ Ծղուկ և Գորայք համայնքների բնակիչների մոտ արձանագրվել են առավելապես անբավարարվածություն և բողոքներ։ ՀԳՔ քննարկումները ցույց են տալիս մասամբ ոչ միանշանակ պատկեր։ Ելակետային գնահատման համեմատությամբ՝ որոշ ցուցիչների գծով արձանագրվել է բարելավում, իսկ որոշ ցուցիչների գծով՝ վատթարացում, մինչդեռ դրանց որոշ մասը մնացել է նույն մակարդակի։ Որևէ ցուցիչին տրված ամենաբարձր գնահատականը եղել է «3»-ը։ Ցուցիչների գնահատականների համար տե՛ս Գծապատկերն ու Աղյուսակը ստորև։

[4]«Որոշ չափով բավարարված» (26.1%), «Շատ բավարարված» (0%)։

## ԳԾԱՊԱՏԿԵՐ 11 ՄԵՂՐԻ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԳՔՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ՝

ԵԳ (1)




ԱԳ (2)




## ԱՂՅՈՒՍԱԿ 16 ՄԵՂՐԻ՝ ՀԳՔ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

| | ԵԳ 2017 | ԱԳ 2019 |
|---|---|---|
| Համայնքում անհրաժեշտ գյուղտ. մեքենաների առկայություն (մեք-ի տեսակ) | 3 | 3 |
| Համայնքում գոյություն ունեցող գյուղտ. մեքենաների որակ | 2 | 3 |
| Գյուղտ. Մեքենաների հասանելիություն գյուղտ. սեզոնի ժամանակ | 2 | 3 |
| Ֆինանսական հարմրվ-ն (վարձակալման հնար-ն, գներ) | 3 | 2 |
| Գյուղտ. մեքենաների տեխնիկական սպասարկման առկայություն և որակ տարբեր անհրաժեշտ մեքենաների տեսակների համար՝տարածք, վերանորոգման կայան., գործիքներ, անձնակազմ | 1 | 1 |
| Չմշակված հողերի առկայություն | 5 | 3 |
| Մատուցվող վերանորոգման ծառայությունների որակը և տևողությունը, արդյունքների հետ բավարարվածություն | 3 | 2 |
| Գյուղատնտես/այգեգործներին մատուցվող ծառայությունների հավասարությունը (մատչելիությունը և առկայությունը բոլոր ֆերմերների համար) | 2 | 3 |
| Տեխնիկական ենթկոցվծք՝գործիքների առկայություն՝բոլոր մեքենաների տեսակների համար | 1 | 3 |

## ՏԵՂ

### Ա. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ. ՄԻՋԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ 2.1 (ՀԳՔ), ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ՝ 30%[5] (ՀԱՐՑՈՒՄ)

Տեղ համայնքում միջբնակավայրային ճանապարհների վերաբերյալ քաղաքացիների գոհունակությունն արձանագրել է բարելավում՝ ԵԳ համեմատությամբ (4.2%): Սա նշանակում է բարելավում, չնայած հարցման ոչ մի մասնակից չի նշել, որ «շատ բավարարված» է: Մասնակիցների խոսքերով՝ ճանապարհային բարելավված պայմաններ են գրանցվել երեք բնակավայրերում, այլ ոչ թե ամբողջ համայնքում: Անվտանգության նշաններ տեղադրված են ճանապարհի միայն այն հատվածում, որը տանում է դեպի Արցախ: ՀԳՔ քննարկումները ցույց են տալիս մասամբ ոչ միանշանակ արդյունքներ: Վեց ցուցիչներից չորսի գծով արձանագրվել է բարելավում: Միջբնակավայրային ճանապարհների ընդհանուր անվտանգությունն և ուղղությունների ու ճանապարհների եզրին բնակավայրերի անվանումներով նշանների ճշգրտությունը ստացել են ավելի ցածր գնահատականներ:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 12 ՁԵՐՄՈՒԿ. ՄԻՋԲՆԿՎ. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ. ՀԳՔՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ՝

ԵԳ (1) ԱԳ (2)




ԱՂՅՈՒՍԱԿ 17 ՁԵՐՄՈՒԿ՝ ՀԳՔ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ՄԻՋԲՆԿՎ. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ)

| | ԵԳ 2017 | ԱԳ 2019 |
|---|---|---|
| Միջբնակավայրային ճանապարհների մակերևույթի վիճակ | 2 | 3 |
| Ջրահեռացման համակարգի առկայություն-որակ միջբն. Ճ-ի համար | 1 | 2 |
| Միջբնակավայրային ճանապարհների մաքրման մեխանիզմների առկայություն, ձնամաքրում, ճանապարհների օգտագործման հնարավորություն կլոր տարի, հեշտ անցանելիություն, ճանապարհների | 2 | 3 |

[5]«Որոշ չափով բավարարված» (30%), «Շատ բավարարված» (0%):

| | | |
|---|---|---|
| վերանորոգման, մաքրման մեքենաներ իառկայություն (տեսակ/որակ) | | |
| Ընդհանուր միջբնակավայրային ճանապարհների անվտանգություն (նախազգուշական նշաններ, ժայռեր, քարաթափում) | 2 | 1 |
| Միջբնակավայրային երկայնքով ուղղությունների և բնակավայրերի անունների նշման առկայություն և ճշգրտություն | 2 | 3 |
| Միջբնակավայրային ճանապարհների գծերի առկայություն և որակ | 1 | 1 |

## Բ. ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ. ՄԻՋԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ 1.2 (ՀԳՔ), ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ՝ 14.3% (ՀԱՐՑՈՒՄ)

Չնայած այն հանգամանքին, որ քաղաքացիների գոհունակության՝ հարցման միջոցով վերհանված մակարդակը Ելակետային գնահատման (13.9%) համեմատությամբ կարծես թե մնացել է գրեթե անփոփոխ, ՀԳՔ քննարկումներում արձանագրվել են բարելավված գնահատականներ: Ըստ տրանսպորտից օգտվողների, համայնքը ստացել է նոր (միկրո)ավտոբուս, սակայն բնակիչները դեռևս հնարավորություն չեն ունեցել օգտվել դրանից: Օգտագործողներն ասել են, որ համայնքում «հանրային տրանսպորտ», որպես այդպիսին, գոյություն չունի: Փոխարենը՝ տարածված է տաքսիների օգտագործումը: Թվում է, որ բնակիչները բավարարված են ձևավորված իրավիճակով, այսինքն՝ տաքսիների օգտագործմամբ, և կարծես թե չեն բողոքում հանրային տրանսպորտի բացակայությունից: Սրանով կարելի է բացատրել գնահատման հարաբերականորեն բարելավված արդյունքները, ինչը գուցե հանգեցնում է նախքան ծրագրային միջամտությունները համայնքների կարիքների հատկորոշման վերաբերյալ քաղաքականությունների վերանայման կարևորությանը:

**ԳԾԱՊԱՏԿԵՐ 13 ՏԵՂ. ՄԻՋԲՆԿՎ. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ. ՀԳՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ՝**

**ԵԳ (1)**




**ԱԳ (2)**



### ԱՂՅՈՒՍԱԿ 18 ՏԵՂ՝ ՀԳՔ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ՄԻՋՔՆԿՎ. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

| | ԵԳ 2017 | ԱԳ 2019 |
|---|---|---|
| Անհրաժեշտ միջհամայնքային երթուղիների առկայություն | 1 | 2 |
| Հանրային (մինի) ավտոբուսների առկայությունը միջբնակավայրային երթուղիներում ծառայելու համար | 1 | 1 |
| Առկա հանրային (մինի) ավտոբուսների վիճակը | 2 | 5 |
| Առկա հանրային մինի (ավտոբուսների) ծառայությունների որակը, ծառայություն մատուցողների վերաբերմունքն օգտվողների նկատմամբ | 2 | 5 |
| Ժամանակացույցի հարմարավետություն, կլոր տարի սպասարկում (օրվա և տարվա գրաֆիկ) | 2 | 4 |
| Անվտանգությունը տր-ի օգտ-ա վայրերում (անցման նշաններ, ճ-ի լայնություն) | 0 | 0 |
| Օգտվողների ֆինանսական հարմարավետություն | 3 | 4 |
| Կանգառների առկայություն | 0 | 2 |
| Կանգառների որակ (նստատեղերի առ-ն և որակ, արևից/անձրևից պաշտպանություն, մաքրություն) | 0 | 0 |

## Գ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՄԻՋԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ 3.4 (ՀԳՔ), ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ՝ 54.3% (ՀԱՐՑՈՒՄ)

Տեղ համայնքում գյուղատնտեսական ծառայություններին առնչվող իրավիճակն արձանագրել է շեշտակի բարելավում: Ամփոփիչ գնահատումը քաղաքացիների գոհունակության մակարդակը ցույց է տալիս 54.3%-ին հավասար՝ ի տարբերություն ԵԳ ժամանակ արձանագրված չափազանց ցածր մակարդակի (8.3%): ԵԳ արդյունքները մատնանշում էին, որ կային բողոքներ գոյություն ունեցող գյուղատնտեսական մեքենաների հնացած լինելուց և դրանք նորոգելու կարողությունների բացակայությունից: Հետազոտության մասնակիցների ընդամենը 54.3%-ը նշել է, որ առկա մեքենաների որակի առումով կամ «որոշ չափով բավարարված» է, կամ՝ «շատ բավարարված», իսկ ընդհանուր թվով 40%-ը նշել է բավարարվածության նույն աստիճանը՝ կապված տարբեր մեքենաների նորոգման կայանի առկայության հետ (որոշ մասնակիցներ նշել են, որ մեքենաների նորոգումը կատարվում է անհատների կողմից, ինքնուրույնաբար): ՀԳՔ-ներով նույնպես արձանագրվել են բարելավված արդյունքներ: Օրինակ՝ նորոգման ծառայությունների որակը քննարկումների մասնակից՝ ծառայություն օգտագործողների ու ծառայություն մատուցողների կողմից գնահատվել է «4»՝ ի հակադրություն ԵԳ ժամանակ արձանագրված «1»-ի:

### ԳԾԱՊԱՏԿԵՐ 14 ՋԵՐՄՈՒԿ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԳՔՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ՝

ԵԳ (1)




ԱԳ (2)




### ԱՂՅՈՒՍԱԿ 19 ՏԵՂ՝ ՀԳՔՔ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

| | ԵԳ 2017 | ԱԳ 2019 |
|---|---|---|
| Համայնքում անհրաժեշտ գյտն. մեքենաների առկայություն (մեք-ի տեսակ) | 3 | 4 |
| Համայնքում գոյություն ունեցող գյտն. մեքենաների որակ | 2 | 3 |
| Գյտն. Մեքենաների հասանելիություն գյտն. սեզոնի ժամանակ | 3 | 3 |
| Ֆինանսական հարմրվտ-ն (վարձակալման հնար-ն, գներ) | 2 | 3 |
| Գյտն. մեքենաների տեխնիկական սպասարկման առկայություն և որակ տարբեր անհրաժեշտ մեքենաների տեսակների համար՝ տարածք, վերանորոգման կայան., գործիքներ, անձնակազմ | 1 | 2 |
| Չմշակված հողերի առկայություն | 4 | 5 |
| Մատուցվող վերանորոգման ծառայությունների որակը և տևողությունը, արդյունքների հետ բավարարվածություն | 1 | 4 |
| Գյուղատնտես/այգեգործներին մատուցվող ծառայությունների հավասարությունը (մատչելիությունը և առկայությունը բոլոր ֆերմերների համար) | 3 | 4 |
| Տեխնիկական ենթկռցվծք՝ գործիքների առկայություն՝ բոլոր մեքենաների տեսակների համար | 3 | 3 |

### Դ. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ. ՄԻՋԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ 1.6 (ՀԳՔ), ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ՝ 97.1% (ՀԱՐՑՈՒՄ)

Այստեղ քաղաքացիների գոհունակության մակարդակն արձանագրել է հսկայական չափով բարելավված արդյունք (97.1%)՝ ի տարբերություն Ելակետային գնահատման արդյունքի (18.1%): ՀԳՔ քննարկումները հաստատում են բարելավված արդյունքները: Ելակետային գնահատման համեմատությամբ՝ ցուցիչների մեծամասնության դեպքում արձանագրվել են կրկնակի բարելավված գնահատականներ: Բոլոր ցուցիչներով գրանցվել են մասամբ բարելավված գնահատականներ: Ելակետային գնահատումը վեր էր հանել բնակիչների մտահոգությունները՝ կապված աղբը գետի կիրճի մեջ թափելու և գյուղի տարածքով մեկ «թռչող» պոլիէթիլենի քանակի հետ: Մտահոգությունը պահպանվում է, քանի որ աղբը շարունակում է թափվել Կոռնիձոր գյուղի կիրճ: Ասում են, որ աղբանոցի վայրը պիտի փոխվի: Տպավորություն կա, որ մարդիկ իրազեկված չեն աղբի վերջնական նշանակման վայրի կամ «ճակատագրի» վերաբերյալ: Թափոնների կառավարման անվտանգության վերաբերյալ բնակիչների գիտելիքի ու կրթության մակարդակը շարունակում է մտահոգիչ մնալ: Գծապատկեր 15-ը և Աղյուսակ 19-ը ներկայացնում են ՀԳՔ միասնական գնահատականները, որոնք վերցված ու համեմատված են երկու գնահատումներից:

Գծապատկեր 15 Տեղ. Աղբահանություն. ՀԳՔ ընդհանուր տվյալներ՝

ԵԳ (1)




ԱԳ (2)



### ԱՂՅՈՒՍԱԿ 20 ՏԵՂ՝ ՀԳՔ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ)

| | | |
|---|---|---|
| Համայնքում աղբամանների առկայություն | 0 | 2 |
| Աղբամանների որակ/պլաստիկի համար առկա բաժանում | 0 | 2 |
| Աղբի հավաքման կետերի/վայրերի սանիտարական պայմանները | 2 | 4 |
| Աղբատար/յուրաքանչյուր այլ աղբը հավաքող/ մեքենաների առկայություն և որակ | 1 | 4 |
| Աղբի հավաքման կետերից ժամանակացույցի և աղբի հեռացման հաճախականության հարմարվետություն | 2 | 3 |
| Ծառայության ֆինանսական հարմարավետություն | 2 | 5 |
| Ծառայության մատուցողների վերաբերմունքն օգտվողների նկատմամբ/ եթե կիրառելի է | 4 | 4 |
| Աղբի օգտագործման և անվտանգության հանդեպ հանրայի նընկալումներ և վստահություն | 2 | 3 |

## Ա. Համայնքային առաջնահերթ խնդիրները և իրազեկվածությունը համայնքային ներդրումների ծրագրերի վերաբերյալ

Ի հավելումն ցուցիչների, որոնք մշակվել են հատուկ գնահատելու հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված ծրագրերի (արդեն իրականացված և ընթացիկ ՀՆԾ-ների շրջանակում) վերաբերյալ քաղաքացիների գոհունակության աստիճանները, բնակիչների հետ հարցումը պարունակել է նաև այլ փոփոխականներ, որպեսզի հնարավոր լինի պատկերացում կազմել իրենց համայնքում դեռևս գոյություն ունեցող հիմնախնդիրների վերաբերյալ ընդհանուր ընկալումների, իրականացված ու ընթացիկ ծրագրերի վերաբերյալ գիտելիքների ու իրազեկվածության մասին: Այս բաժինը ներկայացնում է հարցման մնացյալ բաժինների վերլուծությունը՝ ԵԳ պատկերի համեմատությամբ:

Մենք բնակիչներին հարցրեցինք իրենց համայնքներում առկա առաջնահերթ հիմնախնդիրների մասին: Չնայած սովորաբար բնակիչները նախընտրում են պատասխանել հոգնակի թվով, զրուցավարները նրանց խնդրել են առանձնացնել մեկ ամենաառաջնահերթ հիմնախնդիր, որը պահանջում է անհապաղ միջամտություն: Հարցման մասնակիցները հիշատակել են համայնքներում իրականացված ՀՆԾ-ների բաղադրիչներ (այդ թվում՝ աղբահանություն, գյուղատնտեսական ծառայություններ ու հանրային տրանսպորտ): Ամենահաճախ հանդիպող պատասխանը, այնուամենայնիվ, «ճանապարհների վիճակն» է (117 պատասխան), որին հետևում են ջրի վիճակը, ներառյալ՝ խմելու և ոռոգման ջրի պակասը, և համայնքներում կոյուղու համակարգի բացակայությունը: Բնակիչների կողմից հիշատակված ամենաառաջնային չորս հիմնախնդիրները ներկայացված են Աղյուսակ 20-ում, ստորև: Պատասխանները համընկնում են 2017 թվականին ԵԳ ընթացքում նշված պատասխանների հետ: Ճանապարհային ենթակառուցվածքը շարունակում է լինել Հայաստանի բազմաբնակավայր համայնքներում գլխավոր չլուծված խնդիրը:

### ԱՂՅՈՒՍԱԿ 21 ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԻՆԳ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ, ԱԳ 2019

| *Ամենաառաջնահերթ հիմնախնդիրներ* | *Պատասխան* |
|---|---|
| Ճանապարհների վիճակը (ներառյալ՝ ծածկույթի (*ասֆալտ*) վիճակը, միջբնակավայրային, ներհամայնքային ճանապարհները, ճանապարհների լուսավորությունը) | 117 |
| Ջրի վիճակը (ներառյալ՝ խմելու և ոռոգման ջրի պակասը, կոյուղու համակարգի բացակայությունը) | 42 |
| Երեխաների համար խաղահրապարակների, մշակութային միջոցառումների, հաղորդակցվելու վայրերի և երիտասարդների համար նախատեսված գործողությունների բացակայություն | 37 |
| Զբաղվածության հնարավորությունների պակաս | 28 |

ԵԳ իրականացման ընթացքում հետազոտական թիմը հատկապես մտահոգված էր՝ ներկայացնելու պատկերացում քաղաքացիների՝ իրենց համայնքներում իրականացվելիք բարելավման ծրագրերի մասին իրազեկվածության վերաբերյալ։ Նախնական ուսումնասիրությունը որևէ տպավորիչ արդյունքի չհանգեցրեց։ Կար ենթադրություն, որ իրավիճակը կփոխվի երբ ծրագրերը փաստացի կսկսեն իրականացվել։ ԱԳ-ը, սակայն, ցույց է տալիս մասամբ նույնատիպ, չբավարարող արդյունքներ։ Հետազոտության մասնակիցների համար պատրաստվել էին իրազեկվածության վերաբերյալ երկու հարցեր. մեկը վերաբերում էր ՀՆԾ-ների մասին նրանց ունեցած գիտելիքներին, իսկ երկրորդը հարցնում էր, թե իրենց կարծիքով համայնքում ինչպիսի ընդհանուր իրազեկվածություն կա ՀՆԾ-ների մասին։ Հարցվողների իրազեկվածությունը ՀՆԾ-ների մասին կարծես թե մի փոքր վատթարացել է 2017 թվականի ԵԳ արդյունքների համեմատությամբ։ **Ջերմուկ** համայնքում հետազոտության մասնակիցների 13%-ն «Այո» է պատասխանել այն հարցին, թե արդյոք տեղյակ են իրենց համայնքում իրականացվող որևէ ՀՆԾ-ից, մինչդեռ երկու տարի առաջ իրազեկվածության մակարդակը կազմում էր 19.8%: **Զառիթափ** համայնքում հետազոտության մասնակիցների իրազեկվածության մակարդակը փոփոխություն չի կրել (18.5%): **Մեղրիում** իրազեկվածության մակարդակը նույնպես ցածր է՝ 11.4%, որը, այդուհանդերձ, գերազանցում է ԵԳ արդյունքը, երբ հարցվողների միայն 8.5%-ն էր նշել, որ տեղյակ է։ **Գորայք** համայնքը պահպանում է ամենաբարձր տոկոսային ցուցանիշը (այլ համայնքների համեմատությամբ)՝ համայնքի բնակչության տոկոսի համամասնությամբ. 21.4%-ն ասել է «Այո», մինչդեռ ԵԳ ժամանակ մակարդակը նույնիսկ ավելի բարձր է եղել (26.1%): **Տեղ** համայնքը դրական արդյունք է արձանագրել ԵԳ համեմատությամբ, երբ հարցվողներից ոչ ոք տեղյակ չէր համայնքում իրականացված կամ իրականացվելիք որևէ ծրագրից։ ԱԳ արձանագրել է հարցվողների իրազեկվածության 5.7%-ոց մակարդակ։ Ամփոփիչ գնահատման արդյունքների համար տե՛ս Գծապատկեր 16-ը։

Հարցման մասնակիցների իրազեկվածության վերաբերյալ զրուցավարների դիտարկումներից է այն, որ չնայած բնակիչները կարող են իրազեկ լինել ծրագրերի որոշակի ասպեկտներից, որպես կանոն նրանք չեն ճանաչում իրենց համայնքում կատարված որևէ խոշոր միջամտություն, էլ չասած այն մասին, որ նրանք անտեղյակ են «համայնքային ներդրումների ծրագիր» սահմանումից, ինչը զրուցավարներին ստիպել էր անհրաժեշտության դեպքում տրամադրել նկարագրություններ ու բացատրություններ։ ՀՆԾ-ներից տեղեկացված են այն բնակիչները, որոնք ակտիվորեն հետևել են իրենց համայնքում տեղի ունեցած զարգացումներին, հետևել են համայնքի ավագանու կողմից հայտարարված միջոցառումներին և մասնակցել են իրենց համայնքի բնակիչների համար կազմակերպված քննարկումներին։ Հետևությունն այն է, որ բնակիչների իրազեկվածությունը կորելյացիայի մեջ է տվյալ անձի ակտիվ ներգրավվածության հետ։ Թվում է, որ բնակիչների նախաձեռնողականությունը իրազեկվածությունից անկախ փոփոխական է, ինչը նվազեցնում է համայնքի ավագանու դերը։

### ԳԾԱՊԱՏԿԵՐ 16 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԾ-ՆԵՐԻ ՄԱՍԻՆ




Ինչ վերաբերում է համայնքներում ընդհանուր իրազեկվածության մակարդակի մասին ընկալումներին (հարց՝ *«Արդյո՞ք կարծում եք, որ Ձեր համայնքի բնակիչներն ընդհանուր առմամբ տեղյակ/իրազեկված են ձեր համայնքում իրականացված (կամ ընթացիկ) ՀՆԾ-ների (ենթակառուցվածքներն հանրային ծառայություններ) մասին»*), ապա 379 հարցվողներից 59-ը (15.6%) պատասխանել է «Այո», 159-ը (42%) պատասխանել է «Ոչ», 135-ը (35.6%) նշել է «Չգիտեմ», իսկ 26-ը (6.9%) պատասխանել է «Որոշ չափով»: Տվյալները ցույց են տալիս կապվածություն հետազոտության մասնակիցների մոտ այլոց իրազեկվածության մակարդակի վերաբերյալ ընկալումների և իրենց սեփական ընկալումների միջև, քանի որ յուրաքանչյուր համայնքում պատասխանների մեծամասնությունը եղել է կամ «Ոչ», կամ «Չգիտեմ»: Պատասխանների բաշխվածությունն ըստ համայնքների ներկայացված է ստորև:

### ԱՂՅՈՒՍԱԿ 22 ՀՆԾ-ՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

*Արդյո՞ք բնակիչները տեղյակ/ իրազեկված են ՀՆԾ-ների մասին*

| | Այո | Ոչ | Չգիտեմ | Որոշ չափով |
|---|---|---|---|---|
| Ջերմուկ | 4 (4.3%) | 27 (29.3%) | 48 (52.2%) | 13 (14.1%) |
| Զառիթափ | 6 (11.1%) | 27 (50%) | 18 (33.3%) | 3 (5.6%) |
| Մեղրի | 31 (22.1%) | 52 (37.1%) | 56 (40%) | 1 (0.7%) |
| Գորայք | 10 (43.5%) | 5 (21.7%) | 3 (13%) | 5 (21.7%) |
| Տեղ | 8 (11.4%) | 48 (68.6%) | 10 (14.3%) | 4 (5.7%) |
| Ընդամենը | 59 (15.6%) | 159 (42%) | 135 (35.6%) | 26 (6.9%) |

Հետազոտության մասնակիցների մեծամասնությունն անտեղյակ է իրենց համայնքներում իրականացված որևէ ներդրումային ծրագրից: Ընդամենը 47 անձ (379 հարցվողներից) նշել է, որ տեղյակ է: Այնուհետև մենք խնդրել ենք նշել, թե բարելավման ինչպիսի ծրագրեր իրենք գիտեն, և ինչպիսի ենթակառուցվածքներ/ ծառայություններ են ենթարկվել բարելավման կամ ներկայում գտնվում են բարելավման ընթացքում: Ամենատարածված պատասխանը «աղբահանություն»-ն է (22 պատասխան), որին հետևում են «ճանապարհների բարեկարգում»-ը (14 պատասխան), «հանրային տրանսպորտի բարելավում»-ը (10 պատասխան), «փողոցների լուսավորությունը» (7 պատասխան) և «գյուղատնտեսական մեքենաների բարելավում»-ը (7 պատասխան):

Նրանց, ովքեր նշել են իրենց համայնքում ՀՆԾ-ների վերաբերյալ իրազեկ լինելու մասին (47 անձ), հարցրել ենք իրենց գիտելիքի աղբյուրի մասին. 47 անձանցից 11-ը պատասխանել է բավական անորոշ ձևով, ինչպես օրինակ՝ «համայնքային կամ տեղական ավագանու ժողովներից կամ քննարկումներից:: Դա հետազոտողի ձախողումն է, որը դաշտային աշխատանքներն իրականացնողներին չի բացատրել լրացուցիչ ճշտող հարց տալու կարևորությունը, որպեսզի հնարավոր լիներ հստակեցնել, թե ինչ ժողովների կամ քննարկումների են հղում կատարում հարցվողները: Սրա մասին որևէ կոնկրետ տվյալ առկա չէ: Հարցվողներից վեցը նշել է, որ ՀՆԾ-ների մասին լսել է իրենց տեղական ավագանուց, իսկ հինգ հոգի նշել է, թե ՀՆԾ-ների մասին լսել է իր ազգականներից կամ ընկերներից:

Հարցվողների մասնակցային գործառույթի մասին լրացուցիչ հարցեր տալու և տեղեկություններ ստանալու նպատակով նրանց հարցրել են, թե արդյոք նրանք մասնակցել են համայնքի կողմից կազմակերպված կամ ՀՆԾ-ներին առնչվող որևէ հանդիպման: Այն 47 հոգուց, որոնք գիտեին ՀՆԾ-ների մասին, 14-ը դրականորեն է պատասխանել՝ նշելով այն միջոցառումները, որոնց մասնակցել է, ներառյալ՝ համայնքի ավագանու նիստ (10), ֆոկուսային խմբերով քննարկումներ (2), ՀՆԾ քննարկում (սույն հետազոտության շրջանակում, ԵԳ 2017) (1), համայնքի հանդիպում երիտասարդության հետ (1):

Հարցին, թե իրենց համայնքի համար որքան կարևոր է եղել ծրագրերի իրականացումը. 24 բնակիչ պատասխանել է՝ «շատ կարևոր», հինգ հարցվող ասել է՝ «որոշ չափով կարևոր», և մեկ հոգի ասել է՝ «ոչ կարևոր, ոչ էլ անկարևոր»: Չնախատեսված հարց է ուղղվել այն անձանց, որոնք նշել էին, որ տեղյակ են իրենց համայնքում իրականացված համայնքային ներդրումների ծրագրերից: Տեղացի բնակչության իրազեկվածությունը ՀՆԾ-ների համար ֆինանսավորում տրամադրող կազմակերպության (կազմակերպությունների) մասին նույնպես սահմանափակ է: ՀՆԾ-ների մասին իմացող/լսած անձանց մեծամասնությունը նշել է, որ չգիտի, թե հաստատությունը կամ կառույցն է տրամադրել ֆինանսական աջակցություն ծրագրի իրականացման համար, իսկ հինգ հոգի նշել է, որ դրանք ֆինանսավորվում են հետևյալ աղբյուրներից. «պետական կամ տեղական բյուջե», «ոսկու հանք» (2), «ՇՋՀԳ» (2), «Եվրամիություն» (1) և «ՄԱԿ» (1): Կարելի է եզրակացնել, որ համայնքապետարանները և ծառայություն մատուցողները չեն կարողացել տեղեկացնել քաղաքացիներին՝ բարձրացնելու բազմաբնակավայր համայնքներում ծառայությունների՝ (այն ժամանակ) սպասվող կամ ներկայում իրականացվող բարելավումների մասին իրազեկության մակարդակը:

## Բ. Քաղաքացիների ձայնը և վստահությունը ՏԻՄ-երի նկատմամբ

Հարցերի մեկ այլ խումբ մշակվել է՝ հասկանալու համար տեղացի բնակչության պատկերացումներն առանձին գործոնների վերաբերյալ, ներառյալ քաղաքացիների ձայնի կարևորությունը, տեղական իշխանության մարմինների նկատմամբ վստահությունը և հավատն առ այն, որ խոշորացման գործընթացի արդյունքում տեղի կունենա որևէ դրական փոփոխություն: Հարցերը կրկնակվել են Ելակետային գնահատման հետազոտությունից, որպեսզի հնարավոր լիներ վերհանել հանրային ընկալումների փոփոխությունները, եթե այդպիսիք լինեին: Մենք հարցրել ենք, թե արդյոք հարցման մասնակիցները հավատում են, որ իրենց համայնքում քաղաքացիները ձայնը նշանակություն ունի: Համաձայն Ամփոփիչ գնահատման արդյունքների, մեծամասնությունը (199 հոգի, մասնակիցների 52.5%-ը) պատասխանել է «Այո», 82 հոգի (21.6%) ասել է «Ոչ», 98 հոգի (25.9%) ասել է «Չգիտեմ»: Ամփոփիչ գնահատման՝ ըստ համայնքների արդյունքներին ծանոթանալու համար տե՛ս Գծապատկեր 17-ը: «Այո» պատասխանի դեպքում ըստ համայնքների ստացված պատասխանների համեմատական բաշխվածությունը ներկայացված է Աղյուսակ 22-ում: Յուրաքանչյուր համայնքում հարցման մասնակիցների մեծամասնությունն «Այո» է պատասխանել: Ելակետային գնահատման հետ համեմատությամբ՝ արդյունքները ցույց են տալիս դրական տեղաշարժ սեփական համայնքում քաղաքացու ձայնի կարևորության նկատմամբ հարցման մասնակիցների վերաբերմունքում: Ամփոփիչ գնահատման արդյունքները մատնանշում են ընկալումների փոփոխություն, որը տեսականորեն կարող է վերագրվել երկրում տեղի ունեցած զարգացումներին, որոնք հայտնի են որպես «Թավշյա հեղափոխություն» (2018թ. ապրիլ):

ԱՂՅՈՒՍԱԿ 23 ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՁԱՅՆԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ



ԱՂՅՈՒՍԱԿ 24 ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՁԱՅՆԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| | ԵԳ | ԱԳ |
|---|---|---|
| Ջերմուկ | 12.6% | 35.9% |
| Ջառիթափ | 8.2% | 85.2% |
| Մեղրի | 18.2% | 52.1% |
| Գորայք | 1.8% | 52.2% |
| Տեղ | 5% | 50% |

Ինչպես ԵԳ դեպքում, այս անգամ էլ հետազոտության մասնակիցներին ուղղվել է հարց այն մասին, թե արդյոք վստահում են իրենց ՏԻՄ-երին: Այս դեպքում նույնպես ԱԳ-ն արձանագրել է շեշտակի փոփոխություն կրած արդյունքներ հանրային վստահության առումով: «Ամենաշատ վստահող» երեք առաջատար բազմաբնակավայր համայնքները Մեղրին, Գորայքն ու Ջառիթափին են: Վստահության ամենաբարձր աստիճանը (համակցելով «Լիովին վստահում եմ» և «Որոշ չափով վստահում եմ» կատեգորիաները) արձանագրվել է Մեղրիում (62.2%), որին հետևում են Գորայքը (56.5%) և Ջառիթափը (53.7%): Տե՛ս Գծապատկեր 17-ը: Ըստ համայնքների ԵԳ և ԱԳ արդյունքներում փոփոխությունների հայտնաբերման համար տե՛ս Աղյուսակ 24-ը:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 17 ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՏԻՄ-ԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ



Աղյուսակ 25 Վստահություն ՏԻՄ-երի նկատմամբ

| | ԵԳ | ԱԳ |
|---|---|---|
| Ջերմուկ | 8.7% | 41.3% |
| Ջառիթափ | 9.7% | 53.7% |
| Մեղրի | 24.5% | 62.2% |
| Գորայք | 4.2% | 56.5% |
| Տեղ | 6.3% | 28.6% |

Ամփոփիչ գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ բարելավվել են քաղաքացիների ընկալումների ու համոզմունքների մակարդակները՝ կապված սեփական համայնքում քաղաքացիների ձայնի կարևորության և տեղական իշխանության մարմինների նկատմամբ վստահության մեծացման հետ։ Միևնույն ժամանակ՝ հետաքրքրական է այն, որ առկա է անհամապատասխանություն հետևյալ երեք երևույթների միջև. ՏԻՄ-երի նկատմամբ վստահության մեծացում, համոզմունք առ այն, որ իրենց ձայնը կարևոր դեր է խաղում, և այդուամենայնիվ ցածր մակարդակով ընկալումներ առ այն, որ համայնքներում տեղի է ունեցել որևէ դրական փոփոխություն։ *«Համաձա՞յն եք/կարծո՞ւմ եք արդյոք, որ խոշորացումը Ջեր համայնքում դրական փոփոխությունների է հանգեցրել»* հարցին ամենահաճախ տրված պատասխանը եղել է հետևյալը՝ «Բացարձակապես ոչ» (100 անձ, 26.4%)։ Հարցման մասնակիցներից 96-ը ասել է «Միգուցե» (25.3%)։ Այս հանգամանքը կարող է բացատրվել խոշորացման գործընթացի նկատմամբ դեռևս որոշ չափով բացասական ընկալումներով, քանի որ հարցի մեջ օգտագործվել էր «խոշորացումից հետո» արտահայտությունը։

Ինչ վերաբերում է 2017 թ. Ելակետային գնահատումից ի վեր ՏԻՄ-երի նկատմամբ վստահության մակարդակի բարձրացմանը, ենթադրությունն այն է, որ եթե հարցը տրվեր՝ նշելով «հեղափոխությունից հետո», ապա մենք երևի թե կստանայինք դրական այլ արդյունքներ։ Ինչ վերաբերում է խոշորացումից հետո դրական փոփոխություններին, ապա Ջերմուկի դեպքը հատկապես մտահոգիչ է թվում։ *«Արդյո՞ք կարծում եք, որ Ջեր համայնքում որևէ բան փոխվել է դեպի լավը»* հարցին «Բացարձակապես ոչ» է պատասխանել հարցվողների 37%-ը՝ Այս հարցին յուրաքանչյուր համայնքի տված պատասխանները ներկայացված են ստորև («Միանշանակ այո» և «Միգուցե» կատեգորիաները համակցված են)։

ԳԾԱՊԱՏԿԵՐ 18 ԽՈՇՈՐԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ




ԱՂՅՈՒՍԱԿ 26 ԽՈՇՈՐԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

| | ԵԳ | ԱԳ |
|---|---|---|
| Ջերմուկ | 9.5% | 17.3% |
| Զառիթափ | 4.7% | 61.1% |
| Մեղրի | 3.9% | 62.1% |
| Գորայք | 2.6% | 43.4% |
| Տեղ | 9.5% | 20.2% |

## Գ. Ծրագրերի հնարավոր ազդեցությունը

Հետազոտության մի առանձին բաժնի միջոցով մենք ձգտում էինք հավաքագրել տվյալներ ՀՆԾ-ների հնարավոր ներգործության վերաբերյալ: Այս հարցին անդրադարձ եղավ նաև ՀԳՔ քննարկումների ընթացքում: Հարցման մասնակիցներին խնդրել ենք նշել այն ոլորտները, որտեղ, նրանց կարծիքով, համայնքային ծրագրերի իրականացումն ամենամեծ դրական ազդեցությունն է ունեցել: Հարցը տրվել է՝ առաջարկելով ոլորտ-կատեգորիաներ և խնդրելով նշել դրական ազդեցության հիմնական ոլորտները, կամ առաջարկել սեփական տարբերակները: Ամենահաճախ տրված պատասխանը «սոցիալական ազդեցությունն» է՝ հանրային տրանսպորտի բարելավման արդյունքում: Երկրորդ և երրորդ ամենահաճախ հանդիպող պատասխաններն են՝ ճանապարհային ենթակառուցվածքների բարելավման «տնտեսական ազդեցությունը» և «սոցիալական ազդեցությունը»: Այս հարցը նաև օգտագործվել է Ելակետային գնահատման ժամանակ, սակայն տրվել է ապագա հեռանկարի իմաստով, որպեսզի հնարավոր

լիներ ստանալ հարցվողների ակնկալիքները ազդեցության ոլորտներից: ԵԳ տվյալների համայնքահեն բաշխվածությունը ցույց տվեց, որ ամենահաճախ օգտագործված պատասխանը ճանապարհային ենթակառուցվածքների բարելավման արդյունքում «տնտեսական ազդեցություննն» էր: Ամփոփիչ գնահատումը ցույց է տալիս ամենահաճախ տրված պատասխանի փոփոխություն, այն է՝ «սոցիալական ազդեցություն»՝ հանրային տրանսպորտի ծառայությունների բարելավման արդյունքում: *Սոցիալական ազդեցությունը* ձևակերպվել է այնպես, որ ներառի դրական ազդեցությունները առողջապահության ու կրթության ոլորտների վրա: Քանի որ այս հարցը չափում է քաղաքացիների ընկալումները հնարավոր ազդեցության վերաբերյալ, օգտակար կլիներ իրականացնել հետազոտություն՝ չափելու համար համայնքային ծրագրերի իրական ներգործությունն (ազդեցությունը) առանձին ոլորտների վրա, որպեսզի հնարավոր լիներ արդյունքները համեմատել քաղաքացիների մոտ իրականության ընկալումների հետ: Համայնքային ներդրումների ծրագրերի ներգործության վերաբերյալ պատասխաններն ամփոփ ներկայացված են ստորև:

| *Ծրագրի ազդեցություն* | Ճանապարհային ենթակառուցվածքներ | Հանրային տրանսպորտ | Գյուղատնտ.ծառայություններ | Աղբահանություն |
|---|---|---|---|---|
| **Տնտեսական** | 59.4% | 46.2% | 48.5% | 26.6% |
| **Սոցիալական (այդ թվում՝ առողջապահություն և կրթություն)** | 53.8% | 64.1% | 20.3% | 17.7% |
| **Մշակութային** | 23.2% | 38.3% | 3.2% | 26.9% |
| **Շրջակա միջավայրի պաշտպանություն** | 7.9% | 3.2% | 7.4% | 81.5% |
| **Հակամարտությունների կարգավորում** | 10.8% | 7.4% | 6.1% | 0.5% |

Հետազոտությունը ներառում էր նաև բաց հարց ներգործության խնդրի վերաբերյալ, ինչը թույլ էր տալու տեղեկություններ ստանալ հարցվողների սեփական տարբերակների մասին: Ստացված պատասխանների որակական վերլուծությունը ներկայացված է ստորև: Մեծամասնությունը տարբեր ձևակերպումներով նշել է, որ «Իրենց համայնքում ոչինչ չի փոխվել» (117 հոգի): Երկրորդ ամենահաճախ տրված պատասխանը (43) մատնանշում է աղբահանության պայմանների բարելավումը, որը բնակիչների խոսքերով հնչել է, այլ ձևակերպումների թվում, հետևյալ կերպ՝ *«ավելի մաքուր միջավայր», «աղբահանության ավելի լավ ժամանակացույց», «ավելի հաճախ կատարվող աղբահանություն», «աղբահանության ծառայությունների բարելավում», «մեր համայնքում առկա աղբահանության խնդրի լուծում»*: Հաջորդ ամենատարածված պատասխանը (23) եղել է հանրային տրանսպորտի բարելավումը: Իրենց սեփական խոսքերով՝ *«ճամփորդելու հարմարությունը», «մատչելի տրանսպորտը», «կարգավորված երթևեկությունը»*: Որոշ ընդհանուր բնույթի պատասխանների թվում են եղել, օրինակ, *«Զգում եմ, որ կյանքը գյուղում առաջ է գնում: Հետևաբար՝ ես էլ եմ առաջ գնում», «Կյանքը մեր համայնքում հեշտացել է», «Գյուղում կյանքը լավացել է, նույնիսկ հնարավոր է մոտակայքում աշխատանք գտնել»:* «Շատ բան է փոխվել գյուղում, բայց չգիտեմ՝ ծրագրից է, թե ոչ»*:*

Ինչպես Ելակետային գնահատման դեպքում, մեր նպատակն էր գնահատել, թե ինչպիսի ազդեցություն կունենա տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց ավելի մեծաքանակ ներկայացվածությունը: Այս դեպքում արդյունքներն այդքան խոստումնալից չեն, որքան *քաղաքացիներիձայնի* կամ *վստահության* մասին տրված հարցերի դեպքում, որոնք քննարկվեցին ավելի վաղ: Զարմանալիորեն՝ ԵԳ արդյունքներն ավելի բարձր էին կանանց մասնակցության վերաբերյալ: Հարցման մասնակիցների 46.7%-ը նշել է, որ կանանց թվի ավելացումը կունենա դրական ազդեցություն, այն դեպքում, երբ մասնակիցների 52.9%-ը եղել են կանայք: Այն մասնակիցների սեռային բաշխվածությունը, որոնք նշել են *«բացասական ազդեցություն»*, հետևյալն է՝ տղամարդիկ՝ 8.4%, կանայք՝ 1.8%: Հետազոտության կին մասնակիցների ընդհանուր առմամբ 20.2%-ը նշել է, որ ՏԻՄ-երում կանանց թվի ավելացումը «ազդեցություն չի ունենա»: Այն անձանց, ովքեր նշել էին «դրական ազդեցություն» տարբերակը, մենք խնդրել ենք բացատրել, թե ինչ են հասկանում այդ ձևակերպման տակ: Ամենահաճախ տրված պատասխանը ստացվել է այնպիսի ածականների թվարկումից, որոնց միջոցով փորձ է արվել նկարագրել, թե այդ դեպքում ինչպիսին կդառնար քաղաքական որոշումների կայացումը, ներառյալ՝ պատասխանատու, պահանջկոտ, ակտիվ, հասուն, կազմակերպված, խելացի, հետևողական և վճռական: Հաճախ տրված հաջորդ պատասխանն առնչվում էր կանանց *արդարացի, վստահելի և օբյեկտիվ* լինելուն, ինչն արտահայտություն կգտնի քաղաքականություններում և կընկալվի որպես դրական ազդեցություն: Այլ պատասխանների թվում էին կանանց մասնակցության կապը կոռուպցիայի մակարդակի նվազման և արդարության վրա հիմնված ու իրավունքների վրա հիմնված քաղաքականություններ թվի ավելացման հետ: Երկու հետազոտական նախագծերի արդյունքում այս հարցին տրված գնահատականների համեմատության համար տե՛ս Գծապատկեր 20-ը և Աղյուսակ 25-ը:

**ԳԾԱՊԱՏԿԵՐ 19 ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՄ-ԵՐՈՒՄ ԿԱՆԱՆՑ ԹՎԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ**



ԱՂՅՈՒՍԱԿ 27 ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՄ-ԵՐՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՔԱՆԱԿԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

| | Ելակետային գնահատում | Ամփոփիչ գնահատում |
|---|---|---|
| **Դրական ազդեցություն** | 57.4% | 46.7% |
| **Ազդեցության բացակայություն** | 25.3% | 24.5% |
| **Չգիտեմ** | 12.4% | 24.3% |
| **Բացասական ազդեցություն** | 5% | 4.5% |

## Եզրակացություն

Սույն զեկույցում ներկայացված ուսումնասիրությունը ցույց է տալիս դրական տեղաշարժ մի շարք ոլորտներում, որոնք գնահատվել են ելակետային և ամփոփիչ գնահատումների շրջանակներում: Համաձայն ելակետային տվյալների՝ բոլոր ծառայությունների վերաբերյալ քաղաքացիների գոհունակության աստիճանը, ներառյալ կանանց շրջանում, կազմել էր 43%: ԱԳ արձանագրել է ծառայությունների վերաբերյալ քաղաքացիների ընդհանուր գոհունակության 10 տոկոսի չափով աճ (52.7%): Դրական այս փոփոխության հետ մեկտեղ, այնուամենայնիվ, պարզ դարձավ, որ առանձին ցուցանիշների և համայնքների դեպքում արդյունքները չեն փոխվել, և երկու տարվա ընթացքում որևէ առաջընթաց չի արձանագրվել:

2017 թվականին անցկացված ԵԳ արդյունքները ցույց տվեցին, որ հինգ բազմաբնակավայր համայնքներում հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների մեծ մասը կամ բացակայում է, կամ գտնվում է վատ պայմաններում: ԵԳ նաև մատնանշեց, որ ծառայությունների հասանելիությունը սահմանափակ է, և առկա է ՏԻՄ-երի նկատմամբ հանրային վստահության ցածր մակարդակ: Մինչ առանձին ծառայությունների հասանելիությունը մնում է մտահոգության առարկա, թվում է, որ իրավիճակը բարելավվել է՝ կապված համայնքում սեփական ձայնի կարևորության նկատմամբ բնակիչների վերաբերմունքի և ՏԻՄ-երի նկատմամբ վստահության մակարդակի բարձրացման հետ:

**Ջերմուկ** համայնքը գնահատման ենթարկված ցուցիչների առումով քաղաքացիների գոհունակության ցածր մակարդակի տեսանկյունից մնում է խնդրահարույց: Ըստ ամփոփիչ գնահատման տվյալների, Ջերմուկը տարբերվում է բազմաբնակավայր մյուս համայնքներից: Բնակիչները շարունակում են բողոքել համայնքի գյուղատնտեսական մեքենաների վարձակալության արժեքից, որը չի տարբերվում մասնավոր մատակարարների առաջարկած գնից: Վստահության ցածր մակարդակները և հավատի բացակայությունն առ այն, որ քաղաքացու ձայնը սեփական համայնքում կարևոր է, բնորոշող գործոններից էին, որոնք կարծես թե այս համայնքում որևէ փոփոխություն չեն կրել ելակետային գնահատումից ի վեր: Խնդիրը կարծես թե ծագում է քաղաքային համայնքի և գյուղական համայնքների խզումից: Որպես հետևանք սա առաջացնում է գոհունակության և վստահության ցածրաստիճան: Այս համայնքում ապագա աշխատանքը պետք է ուղղվի նշված անջրպետի վերացմանը: **Զառիթափ** համայնքում հիմնական խնդիրը քաղաքացիների շրջանում աղբի օգտագործման և անվտանգության, դրանց վերջնական նշանակման վայրի և հետևանքների վերաբերյալ գիտելիքի պակասն է: Սա եղել և մնում է մտահոգություն սույն հետազոտության շրջանակում դիտարկված համայնքների մեծամասնության համար: Համայնքային ներդրումների ծրագրեր ստացած համայնքներից **Մեղրին** կարծես թե հաջողություն է արձանագրել: Ցուցանիշների մեծամասնությունն ակնհայտորեն բարելավվել է: **Գորայք** համայնքում իրականացված միակ ծրագիրը գյուղատնտեսական ծառայությունների բարելավումն էր: Արդարացի կլինի եզրակացնել, որ ծրագիրը չի հասել իր նպատակին: Արդյունքները ցույց են տալիս, որ մինչ օրս համայնքը բախվում է անհրաժեշտ գյուղատնտեսական մեքենաների բացակայության հետ, ինչը հանգեցնում է քաղաքացիների անբավարարվածության: **Տեղ** համայնքում, որը բոլոր չորս տեսակի ներդրումային ծրագրերի ստացողն է, արձանագրվել է հարաբերական բարելավում: Ակնհայտորեն՝ Տեղի բնակիչներն օգտագործում են տաքսիներ և չեն բողոքում հանրային տրանսպորտի բացակայությունից, որից նրանք օգտվելու հնարավորություն չունեն:

Սա է պատճառներից մեկը, որը բացատրում է գնահատման հարաբերականորեն բարելավված արդյունքները, ինչը գուցե հանգեցնում է նախքան միջամտությունը համայնքների կարիքների հատկորոշման վերաբերյալ քաղաքականությունների վերանայման կարևորությանը։

Համայնքների մեծամասնությունը ցուցաբերում է շեշտակիորեն բարելավված արդյունքներ ՏԻՄ-երի նկատմամբ **հանրային վստահության** տեսակետից և քաղաքացիների համոզմունքի առումով առ այն, որ իրենց ձայնը **կարևոր դեր ունի սեփական համայնքում**։ Հաշվի առնելով Հայաստանում քաղաքական միջավայրի փոփոխությունները՝ որոշակիորեն դժվար է դրական վերաբերմունքի բոլոր դրսևորումները վերագրել միայն համայնքային ներդրումների ծրագրերին։ Սա նշանակում է, որ դրական ազդեցության արդյունքում արձանագրված փոփոխությունները (կամ տրանսֆորմացիան) կարող է արդյունք լինել երկրում տեղի ունեցած ընդհանուր փոփոխությունների։

## Առաջարկություններ

Սույն ամփոփիչ գնահատման արդյունքում, շահագրգիռ կողմերի ուշադրությանը ներկայացվելու և նրանց կողմից իրագործվելու համար, մշակվել են հետևյալ վեց առաջարկությունները՝ նկատի առնելով համայնքներում որևէ հնարավոր ապագա ծրագրային միջամտություն: Առաջարկությունները պետք է դիտարկվեն հետևյալ հաստատությունների և դերակատարների կողմից՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, տեղական ինքնակառավարման մարմիններ, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, միջազգային դոնոր կազմակերպություններ և քաղաքացիական հասարակություն:

- Տեղական համայնքներում **թափոնների կառավարման անվտանգության** վերաբերյալ բնակիչների գիտելիքը շարունակում է մնալ մտահոգիչ մակարդակի: Անհրաժեշտ են ավելի շատ միջոցառումներ՝ բնակիչներին թափոնների օգտագործման և անվտանգության խնդիրների մասին կրթելու նպատակով: Միևնույն խնդիրը վեր է հանվել ԵԳ ընթացքում, և թվումէ, որ այն մնայուն խնդիր է:Թափոնների կառավարման (աղբահանության) վերաբերյալ բնակիչների գիտելիքներն ու ընկալումները մնում են աղավաղված և անհրաժեշտ են դարձնում ապագա գործողությունները: Գոյություն ունի ինչպես քաղաքականությունների մակարդակով կանոնակարգերի, այնպես էլ իրազեկության բարձրացման քարոզարշավների կարիք՝ ուղղված թափոնների օգտագործման և անվտանգության միջոցառումների վերաբերյալ կրթության բարելավմանը: Գոյություն ունի աղբահանության լավագույն եղանակների (առանձնացում, հավաքում և թափում) վերաբերյալ իրազեկության տարածման անհրաժեշտություն: Դիտարկված բազմաբնակավայր համայնքներում գոյություն չունի թափոնների պատշաճ օգտագործման ոչ համակարգ, ոչ էլ մշակույթ:
- Գոյություն ունի **սեփական համայնքներում որոշումների կայացման գործընթացներում տեղացի բնակիչների** շոշափելի (և չափելի) ներգրավվածության անհրաժեշտություն: Մասնավորապես այն դեպքերում, երբ նպատակը ծրագրային միջամտության համար կարիքի տեսակի որոշարկումն է: ԵԳ և ԱԳ արդյունքները ցույց են տալիս, որ իրականացված ծրագրերը համապատասխանել են համայնքների կարիքներին: Միևնույն ժամանակ՝ գնահատումների արդյունքները երևան են հանում նոր խնդիրներ, հրատապ մտահոգություններ, որոնք գուցե չեն արժանացել պատշաճ ուշադրության: Ապագա միջամտությունը չպիտի բացառապես հենվի համայնքի ավագանու անդամների վրա՝ հատկորոշելու ամբողջ բազմաբնակավայր համայնքում առկա հիմնախնդիրները, քանի որ հակառակ դեպքում կառաջանա գոյություն ունեցող որոշ լուրջ մտահոգություններ չդիտարկելու ռիսկ: Խորհուրդ է տրվում որևէ միջամտությունից առաջ անցկացնել/կիրառել մի ներկայացուցչական հարցում, քննարկումներ և մասնակցային հետազոտության մոտեցումներ, որոնք կընդգրկեն համայնքների բնակիչներին: Համայնքներն անհրաժեշտ են դարձնում ավելի մեծ ուշադրությունն այն բանի հանդեպ, թե ինչպես է սահմանվում խնդիրների առաջնահերթությունը, ինչը վերջիվերջո առաջ է բերելու բնակիչների ներկայացուցչական ներգրավման առաջնահերթությունը:

- Բազմաբնակավայր հինգ համայնքներում քաղաքացիների ամենաառաջնահերթ մտահոգությունների թվում նշվում են **ջրի խնդիրը, ներառյալ՝ խմելու ջրի կորուստը, ոռոգման և կոյուղու համակարգի բացակայությունը:** Առաջարկվում է, որ ապագա ծրագրային միջամտությունները հաշվի առնեն ջրի խնդիրը որպես ներգրավման հնարավոր և անհրաժեշտ ոլորտ, ինչը պահանջում է նախապես իրականացվող գնահատում և աջակցություն Հայաստանի տեղական համայնքներին։
- Այժմ, երբ գնահատումներն ամփոփված են, չնայած այն հանգամանքին, որ ընտրված համայնքային ներդրումների ծրագրերը գտնվում են իրականացման ընթացքում, **բոլոր ծառայությունների մոնիտորինգը** դառնում է ոչ միայն գերադասելի, այլև անհրաժեշտ։ Առաջարկվում է, որ տեղացի բնակիչները, ՄԱԶԾ թիմը կամ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը ստեղծեն մի մարմին, որը մոնիտորինգի կենթարկի բոլոր ծառայությունների իրականացումը համայնքներում, որպեսզի հնարավոր լինի հետևել և պարզել, թե արդյոք ծրագրերը հասել են իրենց հայտարարած նպատակներին, ինչպես դա նախապես մշակվել էր։
- Այս հետազոտությունը չափել է քաղաքացիների ընկալումները համայնքներում իրականացված ծրագրերի հնարավոր ազդեցությունների վերաբերյալ։ Հետազոտության մասնակիցների ճնշող մեծամասնությունն ասել է, որ ամենամեծ ազդեցությունը եղել է *սոցիալական* բնույթի (*այդ թվում՝ առողջապահության և կրթության ոլորտները*)՝ ի հետևանք հանրային տրանսպորտի բարելավման և *տնտեսական ու սոցիալական ներգործության*, որն արձանագրվել է ճանապարհային ենթակառուցվածքների բարելավման արդյունքում։ Օգտակար կլինի ձեռնարկել մի **հետազոտություն, որը հատուկ մշակված կլինի չափելու համար համայնքային ծրագրերի յուրաքանչյուր ցուցիչի ազդեցությունն** առանձին ոլորտների վրա, որպեսզի հնարավոր լինի արդյունքները համեմատել քաղաքացիների մոտ իրականության ընկալման հետ։
- Գործողություններն ուղղելով բոլոր շահագրգիռ կողմերին՝ մեծապես խորհուրդ է տրվում մշակել մոտեցումներ, որոնք ուղղված կլինեն **բազմաբնակավայր համայնքներում կանանց զորացման աշխատանքների** շարունակականությանը։ Բնակիչների հավատն առ այն, որ տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց քանակի ավելացումը հանգեցնելու է դրական արդյունքի, չհաստատվեց, ինչը մտահոգիչ է, հատկապես «փոփոխությունների» և երկրի զարգացման նպատակով նոր աշխատատեղանակների և հնարավորությունների հույսի ժամանակներում։ Ավելի շատ կանանց ներգրավող նախաձեռնությունները պետք է շարունակեն մնալ որպես գործունեության կարևոր առանձնահատկություն՝ հայաստանյան տեղական համայնքների և ողջ հասարակության զարգացման ճանապարհին։

## Հավելված I ՀՀ համայնքներում քաղաքացիների գոհունակության

# <u>ՀԱՐՑՈՒՄ</u>

*Լրացվում է զրուցավարի կողմից.*

Հարցաթերթիկ # _____ Ամիս, ամսաթիվ _________ Զրուցավար (անուն, ազգանուն) ___________________________

Մարզ՝ 1. Վայոց Ձոր 2. ՍյունիքՀամայնք՝1. քաղաքային2. գյուղական

Նշել համայնքը՝

1. Ջերմուկ2. Կեչուտ3.Գնդեվազ 4.Հերհեր5. Կարմրաշեն 6. Զառիթափ7. Բարձրունի8. Մարտիրոս 9.Սերս 10. Գոմք11.Նոր Ազնաբերդ12. Խմձորուտ 13. Արտավան14. Սարավան 15.Մեղրի16. Ագարակ17. Ալվանք 18. Լեհվազ19. Կարճևան20.Լիճք 21. Կուրիս 24. Շվանիձոր 25. Նռնաձոր 26.Վարդանիձոր 27. Տաշտուն 28. Գորայք 29. Սպանդարյան30. Սառնակունք 31. Ծղուկ 32. Տեղ 33. Արավուս 34. Կոռնիձոր 35. Քարաշեն 36. Խնածախ 37. Վաղատուր38. Խոզնավար

Բարև: Իմ անունն է _______ : Ես ներկայացնում եմ ՄԱԿ-ի Զարգացման գործակալության կողմից իրականացվող ***Կանայք տեղական ժողովրդավարական գործընթացներում (ԿՏԺԳ) ծրագիրը***:

Այժմ, մենք իրականացնում ենք մարզերում իրավիճակի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, որը դիտարկում է համայնքներում առկա հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների իրավիճակը: Ուսումնասիրութան բաղադրիչներից մեկն է՝ քաղաքացիների հետ հարցումը: Հարցմանը մասնակցելու համար /դուք և/ Ձեր տնային տնտեսությունն ընտրվել եք/է պատահականության սկզբունքով, և մենք ակնկալում ենք Ձեր մասնակցությունը՝ մեր ուսումնասիրությանը: <u>Հարցումը կտևի մոտ 10 րոպե</u>: Ձեր անունը որևէ կերպ չի օգտագործվի թե՛այս հարցաթերթիկի, և թե՛ուսումնասիրության արդյունքների վերլուծության ընթացքում: Մենք երաշխավորում ենք Ձեր պատասխանների գաղտնիությունը: Ուսումնասիրությունը ունենալու է արդյունքների հավաքական վերլուծություն: Շնորհակալ կլինենք եթե համաձայնվեք տրամադրել Ձեր ժամանակը հարցերին պատասխանելու համար՝ինչը կնպաստի ուսումնասիրությանը: Ցանկանում եմ տեղեկացնել նաև, որ Ձեր մասնակցությունը կամավորական է: Դուք իրավունք ունեք հրաժարվել որևէ հարցին պատասխանելուց, կամ ցանկացած պահի դադարեցնել հարցումը: Մասնակցության դեպքում՝որևէ ֆինանսական (կամ այլ) փոխհատուցում մեր կողմից չի տրամադրվում: Ձեր մասնակցությունը կօգնի հասկանալ Ձեր համայնքում առկա իրավիճակը: Ուսումնասիրության վերաբերյալ հարցերի դեպքում կարող եք դիմել մեր թիմի անդամներին՝ *xxx* կամ *xxx* հեռախոսահամարների միջոցով: Եթե համաձայն եք, կարող ենք սկսել հարցումը: Շնորհակալություն:

---

***Նշում*** *՝հարցումը իրականացվում է տաս ԿՏԺԳ ծրագրի ներկայացուցիչների կողմից: Սույն համաձայնության ձևը կընթերցվի հարցազրույցի մասնակիցներին: Հարցման անցկացման նախատեսված ժամկետը ՝2017թ. Օգոստոսի 17-31: Հարցման տվյալների պաշտպանությունը երաշխավորվում է ԿՏԺԳ հետազոտողի կողմից:* ***<u>Զրուցավար</u>*** *՝Շրջանակի մեջ առեք նախընտրած պատասխանի թիվը կամ նշում կատարեք հարցվողի կողմից նախընտրած համապատասխան վանդակում. Տվեք մեկ պատասխան յուրաքանչյուր հարցի համար ՝ բացառությամբ նշված դեպքերի:*

<u>ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑ 1 Հանդիսանու՞մ եք այս համայնքի բնակիչ:</u>

(1) Այո (շարունակել հարցումը)
(2) Ոչ (ավարտել հարցումը)
(3) Հրաժարվում եմ պատասխանել (ավարտել հարցումը)
(4) Չգիտեմ (ավարտել հարցումը)

<u>ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑ 2 Տարիք. քանի՞տարեկան եք:</u>

(1) 18 և բարձր(շարունակել հարցումը)_______
(2) 18-ից փոքր(ավարտել հարցումը)
(3) Հրաժարվում եմ պատասխանել (ավարտել հարցումը)
(4) Չգիտեմ (ավարտել հարցումը)

## ՄԱՍ A ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ /ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ (A1-A3)

A1. Որքա՞ն եք բավարարված Ձեր բնակավայրում (նշեք անունը)՝ հետևյալ հանրային ծառայություններից և ենթակառուցվածքներից: Խնդրում եմ նշել/արդյոք կասեք որ/ լիովին բավարարված եք, որոշ չափով բավարարված եք, ոչ բավարարված եք՝ ոչ էլ բավարարված չեք (միջին), որոշ չափով բավարարված չեք, ամենևին բավարարված չեք (նշել- կիրառելի չէ՝ տվյալ համայնքում տվյալ ծառայության բացակայության դեպքում):

| | ամենևին ոչ բավարարված (1) | որոշ չափով ոչ բավարարված (2) | միջին (3) | որոշ չափով բավարարված (4) | լիովին բավարարված (5) | կ/չէ (6) |
|---|---|---|---|---|---|---|
| Միջբնակավայրային ճանապարհներ | | | | | | |
| Հանրային տրանսպորտ | | | | | | |
| Գյուղատնտեսական ծառայությունների հասանելիություն (վերանորոգման ծառայություններ) | | | | | | |
| Աղբահանություն | | | | | | |

A2. Որքա՞ն եք բավարարված Ձեր բնակավայրում (նշեք անունը)՝ հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների հետևյալ ցուցանիշներից: Խնդրում եմ նշել /արդյոք կասեք որ/ լիովին բավարարված եք, որոշ չափով բավարարված եք, ոչ բավարարված եք՝ ոչ էլ բավարարված չեք (միջին), որոշ չափով բավարարված չեք,

ամենևին բավարարված չեք (նշել- կիրառելի չէ՝ տվյալ համայնքում տվյալ ծառայության բացակայության դեպքում):

| | ամենևին ոչ բավարարված (1) | որոշ չափով ոչ բավարարված (2) | միջին (3) | որոշ չափով բավարարված (4) | լիովին բավարարված (5) | կ/չէ (6) |
|---|---|---|---|---|---|---|
| **A2.1 Միջհամայնքային ճանապարհներ** | | | | | | |
| **2.1.1** Միջհամայնքային ճանապարհների մակերևույթի վիճակ (ասֆալտապատում, խճապատում, հարթեցում) | | | | | | |
| **2.1.1.2** [Meghri only] Մեղրի ք. մտնող այլընտրանքային ճանապարհի մակերևույթի վիճակ (ասֆալտի առկայություն /լայնություն, երկարություն) | | | | | | |
| **2.1.2** Ճ-ին ջրահեռացման համակարգի առկայություն և որակ միջբնակավայրային ճանապարհների համար | | | | | | |
| **2.1.3** միջբնակավայրային ճանապարհների մաքրման մեխանիզմների առկայություն, ձնամաքրում (եղանակային պայմաններ, հողի փոշի), ճանապարհների օգտագործման հնարավորություն կլոր տարի, հեշտ անցանելիություն, ճանապարհների վերանորոգման, մաքրման մեքենաների առկայություն (տեսակ/որակ) | | | | | | |
| **2.1.4** Ընդհանուր միջբնակավայրային ճանապարհների անվտանգություն (նախազգուշական նշաններ, ծայրեր, բարաքափում եւ այլն) | | | | | | |
| **2.1.5** Միջբնակավայրային երկայնքով ուղղությունների և բնակավայրերի անունների նշման առկայություն և ճշգրտություն | | | | | | |
| **2.1.6** Միջբնակավայրային ճանապարհների գծերի առկայություն և որակ | | | | | | |
| **A2.2 Հանրային տրանսպորտ** | | | | | | |
| **2.2.1** Անհրաժեշտ միջհամայնքային երթուղիների առկայություն | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **2.2.2** Հանրային (մինի) ավտոբուսների առկայությունը միջհամայնքային երթուղիներում ծառայելու համար | | | | | | |
| **2.2.3** Առկա հանրային (մինի) ավտոբուսների վիճակը | | | | | | |
| **2.2.4** առկա հանրային մինի (ավտոբուսների) ծառայությունների որակը, ծառայություն մատուցողների վերաբերմունքն օգտվողների նկատմամբ | | | | | | |
| **2.2.5** Հասարակական տրանսպորտի ժամանակացույցի հարմարավետություն, կլոր տարի սպասարկում (օրվա և տարվա գրաֆիկ) | | | | | | |
| **2.2.6** Ճանապարհային անվտանգությունը այն վայրերում, որտեղ մարդիկ օգտագործում են հասարակական տրանսպորտը (անցման նշանները, ճանապարհի լայնությունը եւ այլն) | | | | | | |
| **2.2.7** օգտվողների ֆինանսական հարմարվող-ն | | | | | | |
| **2.2.8** Կանգառների առկայություն | | | | | | |
| **2.2.9** Կանգառների որակ (կանգառներում նստատեղերի առկայություն և որակ, արևից/անձրևից պաշտպանության առկայուն, աղբարկղերի մաքրություն) | | | | | | |
| **A2.3 Գյուղատնտեսություն** | | | | | | |
| **2.3.1** Համայնքում անհրաժեշտ գյուղ. մեքենաների առկայություն (մեքենաների տեսակ) | | | | | | |
| **2.3.2** Համայնքում գոյություն ունեցող գյուղ. մեքենաների որակ | | | | | | |
| **2.3.3** Գյուղ. մեքենաների հասանելիություն գյուղ. սեզոնի ժամանակ | | | | | | |
| **2.3.4** Ֆինանսական հարմրվող-ն (վարձակալման հնար-ն, գներ) | | | | | | |
| **2.3.5** Գյուղ. մեքենաներիտեխնիկական սպասարկման առկայություն և որակ տարբեր անհրաժեշտ մեքենաների տեսակների համար՝ տարածք, վերանորոգման կայանատեղի, գործիքներ, անձնակազմ | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2.3.6 Ցանքատարածքների առկայություն | | | | | | |
| 2.3.7 Մատուցվող վերանորոգման ծառայությունների որակը եւ տեւողությունը, արդյունքների հետ բավարարվածություն | | | | | | |
| 2.3.8 Գյուղատնտես/այգեգործներին մատուցվող ծառայությունների հավասարությունը (մատչելիությունը և առկայությունը բոլոր ֆերմերների համար) | | | | | | |
| 2.3.9 Տեխնիկական ենթկոցվծք՝ գործիքների առկայություն՝ բոլոր մեքենաների տեսակների համար | | | | | | |
| **A2.4 Աղբահանություն** | | | | | | |
| 2.4.1 Համայնքում աղբամանների առկայություն | | | | | | |
| 2.4.2 Աղբամանների որակ/պլաստիկի համար առկա բաժանում | | | | | | |
| 2.4.3 Աղբի հավաքման կետերի/վայրերի սանիտարական պայմանները | | | | | | |
| 2.4.4 Աղբատար /յուրաքանչյուր այլ աղբը հավաքող/ մեքենաների առկայություն և որակ | | | | | | |
| 2.4.5 Աղբի հավաքման կետերից ժամանակացույցի եւ աղբի հեռացման հաճախականության հարմարվետություն | | | | | | |
| 2.4.6 Ծառայության ֆինանսական հարմարավետություն | | | | | | |
| 2.4.7 Ծառայության մատուցողների վերաբերմունքն օգտվողների նկատմամբ/ եթե կիրառելի է | | | | | | |
| 2.4.8 Աղբի օգտագործման և անվտանգության հանդեպ հանրային ընկալումներ և վստահություն | | | | | | |

A3. Ո՞րն է ձեր համայնքում առաջնահերթ/առավել կարևոր/հրատապ ուշադրության կարիք ունեցող համայնքային ծառայության վերաբերյալ խնդիրը: Խնդրում եմ նշել մեկ՝ ամենակարևոր խնդիրը:

(1) ______________________________________________

(2) Չգիտեմ

## ՄԱՍ B: ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ (B1-B4)

B1. Արդյոք տեղյա՞կ եք համայնքային և միջհամայնքային հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների բարելավման որևէ առկա կապիտալ ներդրումների ծրագրերի մասին:

(1) Այո

(2) Ոչ (անցնել հարց B2)

B1.1 Եթե այո, խնդրում եմ նշել ծրագիրը (ինչպիսի՞ ծառայություններ են բարելավվելու):

_______________________________________________

B1.2 Ինչպե՞ս եք իմացել ծրագրի մասին:

_______________________________________________

B1.3 Մասնակցե՞լ եք արդյոք ծրագրին առնչվող որևէ հանդիպումների /միջոցառումների:

(1) Այո, նշել ինչպիսի հանդիպումներ/միջոցառումներ

_______________________________________________________________________________

(2) Ոչ

B1.4 Ո՞ւմ կողմից է ֆինանսավորվում տվյալ ծրագիրը:

(1) _____________________________

(2) Չգիտեմ

B1.5 Որքանո՞վ է կարևոր ծրագրերի իրականացումը ձեր համայնքի համար:

(1) Ընդհանրապես կարևոր չէ

(2) Որոշ չափով կարևոր չէ

(3) Ոչ կարևոր է, ոչ էլ անկարևոր /միջին

(4) Որոշ չափով կարևոր է

(5) Շատ կարևոր

B2. Ի՞նչ եք կարծում, ձեր համայնքի բնակիչները, ընդհանուր առմամբ, տեղեկացվա՞ծ են իրականացվելիք (տվյալ) կապիտալ ներդրումների ծրագրերի մասին:

(1) Այո

(2) Ոչ

(3) Չգիտեմ

## ՄԱՍ C: ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ (C1-C5)

C1. Ի՞նչ կասեք, արդյո՞ք զգում եք որ քաղաքացու ձայնը նշանակություն ունի, որ հանրության մասնակցությունը կարող է ազդեցություն ունենալ ձեր համայնքում տեղական ինքնակառավարման վերաբերյալ խնդիրների և որոշումների կայացման գործընթացներին:

(1) Այո

(2) Ոչ

(3) Չգիտեմ

C2. Որքա՞ն եք վստահում ձեր տեղական ինքնակառավարման մարմիններին/պաշտոնյաներին: Խնդրում եմ նշել/արդյոք կասեք որ/ լիովին վստահում եք, որոշ չափով վստահում եք, ոչ վստահում եք, ոչ էլ չեք վստահում, որոշ չափով չեք վստահում, ամենևին չեք վստահում:

(1) Ամենևին չեմ վստահում
(2) Որոշ չափով չեմ վստահում
(3) Ոչ վստահում եմ, ոչ էլ չեմ վստահում /միջին
(4) Որոշ չափով վստահում եմ
(5) Լիովին վստահում եմ

C3. Հավատո՞ւմ եք/կարծո՞ւմ եք արդյոք, որ համայնքների խոշորացումը ձեր համայնքում դրական փոփոխությունների կհանգեցնի:

(1) Բացարձակապես ոչ
(2) Հազիվ թե/դժվարությամբ
(3) Փոփոխությունների կարիք չկա
(4) Միգուցե
(5) Անպայման
(6) Չգիտեմ

C4. Ի՞նչ եք կարծում, ծրագրերի իրականացման ընթացքում բողոքարկման համակարգի ներդրման մասին, ուր բնակիչները կարող են դիմել դժգոհությունների դեպքում:

(1) Ոչ/կարիք չկա
(2) Միգուցե
(3) Այո/կարիք կա
(4) Չգիտեմ

C5. Ինչպե՞ս եք պատկերացնում ծառայությունների մատուցման վերահսկումը բնակիչների կողմից:

______________________________________________________________________________

## ՄԱՍ D: ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (D1-D3)

D1. Կապիտալ ներդրումների ծրագրերի արդյունքում՝ համայնքում ո՞ր ոլորտների վրա ազդեցությունը կլինի առավել զգալի *(նշում՝ կարդալ բոլոր տարբերակները՝ նշել առավելագույն՝ երեք ազդեցություն յուրաքանչյուր բաղադրիչի /4/ համար):*

| | Միջհամայնքային ճանապարհներ | Հանրային տրանսպորտ | Գյուղատնտեսական ծառայությունների հասանելիություն | Աղբահանություն |
|---|---|---|---|---|
| Տնտեսական | | | | |
| Սոցիալական՝ հանրային առողջություն և կրթություն ներառյալ | | | | |
| Մշակութային | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Բնապահպանական | | | | |
| Հակամարտության կարգավորում | | | | |
| Այլ 1, նշել | | | | |
| Այլ 2, նշել | | | | |
| Այլ 3, նշել | | | | |
| Ոչ մի | | | | |

Այլ 1________________________________________________

Այլ 2________________________________________________

Այլ 3________________________________________________

Այլ 4________________________________________________

Այլ 5________________________________________________

Այլ 6________________________________________________

D2. Ի՞նչը կփոխվի Ձեր կյանքում ծառայությունների ներդրման արդյունքում:

________________________________________________________________________

________________________________________________________________________

D3. Ինչպիսի՞ ազդեցություն կունենա կանանց թվի աճը Ձեր համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններում:

(1) Բացասական ազդեցություն
(2) Ոչ մի ազդեցություն
(3) Դրական ազդեցություն -- D3.1 Ինչպե՞ս, խնդրում եմ նշել ____________________
(4) Չգիտեմ

## ՄԱՍ E: ՀԱՐՑՎՈՂԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ (E1-E5)

E1. Սեռ: (1) Ի (2) Ա
E2. Տարիք ______ (լրացվում է դիտարկելով ստուգման հարց 2)
E3. Կրթություն
(1) Տարրական
(2) Միջնակարգ, ներառյալ անցյալում 10-տարվա համակարգը
(3) Ավագ դպրոց
(4) Մասնագիտական
(5) Բակալավրի աստիճան
(6) Բակալավրից բարձր ցանկացած աստիճան (ներառյալ նախկին 5-տարվա համալսարանական համակարգը)
E4. Զբաղվածություն __________ (գյուղատնտես, ուսուցիչ, դաստիարակ և այլն)
E5. Հեռախոսահամար __________ (հարցման վերահսկման նպատակով՝ բացատրել):

## ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:

# Հավելված 2 Քաղաքացիների գոհունակություն՝ ՀԳՔ ընդհանուր տվյալներ

## Աղյուսակ 28 Միջբնակավայրային ճանապարհների սպասարկում

| | Ջերմուկ | | Մեղրի | | Տեղ | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՕԳՏ | ՄԱՏ | ՕԳՏ | ՄԱՏ | ՕԳՏ | ՄԱՏ |
| 1. Միջբնակավայրային ճանապարհների մակերևույթի վիճակ | 3 | 2 | 3 | 4 | 3 | 3 |
| 1.1 Մեղրի ք. Մտնող այլընտրանքային ճանապարհի մակերևույթի վիճակ (ասֆալտի առկայություն/լայնություն, երկարություն) | կ/չէ | կ/չէ | 4 | 5 | կ/չէ | կ/չէ |
| 2. Ջրահեռացման համակարգի առկայություն-որակ միջբն. ճ-ի համար | 1.5 | 2 | 3 | 4 | 3 | 2 |
| 3. Միջբնակավայրային ճանապարհների մաքրման մեխանիզմների առկայություն, ձնամաքրում, ճանապարհների օգտագործման հնարավորություն կլոր տարի, հեշտ անցանելիություն, ճանապարհների վերանորոգման, մաքրման մեքենաներ հառկայություն (տեսակ/որակ) | 4 | 4 | 4 | 4 | 5 | 2 |
| 4. Ընդհանուր միջբնակավայրային ճանապարհների անվտանգություն (նախազգուշական նշաններ, ժայռեր, քարաթափում) | 3 | 4 | 4 | 4 | 1 | 2 |
| 5. Միջբնակավայրային երկայնքով ուղղությունների և բնակավայրերի անունների նշման առկայություն և ճշգրտություն | 4.5 | 5 | 5 | 4 | 5 | 2 |
| 6. Միջբնակավայրային ճանապարհների գծերի առկայություն և որակ | 3 | 3 | 4 | 3 | 1 | 1 |

## Աղյուսակ 29 Միջբնակավայրային տրանսպորտային կապի ապահովում

| | Ջերմուկ | | Ջաղիթափ | | Մեղրի | | Տեղ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ՕԳՏ | ՄԱՏ | ՕԳՏ | ՄԱՏ | ՕԳՏ | ՄԱՏ | ՕԳՏ | ՄԱՏ |
| 1. Անհրաժեշտ միջհամայնքային երթուղիների առկայություն | 3 | 3 | 4 | 3.5 | 5 | 5 | 4 | 1 |
| 2. Հանրային (մինի) ավտոբուսների առկայությունը միջբնակավայրային երթուղիներում ծառայելու համար | 3 | 3 | 3 | 3 | 5 | 4 | 0 | 1 |
| 3. Առկա հանրային (մինի) ավտոբուսների վիճակը | 3 | 3.5 | 5 | 5 | 5 | 4 | - | 5 |
| 4. Առկա հանրային մինի (ավտոբուսների) ծառայությունների որակը, ծառայություն մատուցողների վերաբերմունքն օգտվողների նկատմամբ | 5 | 4 | 3 | 5 | 5 | 4 | - | 5 |
| 5. Ժամանակացույցի հարմարավետություն, կլոր տարի սպասարկում (օրվա և տարվա գրաֆիկ) | 3 | 4 | 5 | 3 | 4 | 4 | - | 4 |
| 6. Անվտանգությունը տր-ի օգտ-ա վայրերում (անցման նշաններ, ճ-ի լայնություն) | 2 | 3.5 | 2 | 2 | 4 | 3 | 0 | 0 |
| 7. Օգտվողների ֆինանսական հարմարավետություն | 5 | 3 | 5 | 4 | 5 | 5 | 4 | 4 |
| 8. Կանգառների առկայություն | 3 | 3 | 1 | 1 | 5 | 4 | 2 | 0 |
| 9. Կանգառների որակ (նստատեղերի առ-ն և որակ, արևից/անձրևից պաշտպանություն, մաքրություն) | 2.5 | 2 | 0 | 1 | 5 | 5 | 0 | 0 |

## ԱՂՅՈՒՍԱԿ 30 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ, ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

| | Ջերմուկ | | Զառիթափ | | Գորայք | | Տեղ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ՕԳՏ | ՄԱՏ | ՕԳՏ | ՄԱՏ | ՕԳՏ | ՄԱՏ | ՕԳՏ | ՄԱՏ |
| 1. Համայնքում անհրաժեշտ գդտն. մեքենաների առկայություն (մեք-ի տեսակ) | 2 | 4 | 3 | 2 | 4 | 3 | 5 | 3 |
| 2. Համայնքում գոյություն ունեցող գդտն. մեքենաների որակ | 3.5 | 4 | 5 | 3 | 3 | 2 | 4 | 2 |
| 3. Գդտն. Մեքենաների հասանելիություն գդտն. սեզոնի ժամանակ | 3 | 4 | 1 | 4 | 2 | 3 | 4 | 3 |
| 4. Ֆինանսական հարմրվտ-ն (վարձակալման հնար-ն, գներ) | - | 3 | 4 | 4 | 1 | 4 | 3 | 3 |
| 5. Գդտն. մեքենաների տեխնիկական սպասարկման առկայություն և որակ տարբեր անհրաժեշտ մեքենաների տեսակների համար՝ տարածք, վերանորոգման կայան., գործիքներ, անձնակազմ | 0 | 3 | 4 | 4 | 0 | 2 | 3 | 2 |
| 6. Չմշակված հողերի առկայություն | 5 (2) | 5 (1) | 4 | 4 | 3 | 3 | 5 | 4 |
| 7. Մատուցվող վերանորոգման ծառայությունների որակը և տևողությունը, արդյունքների հետ բավարարվածություն | 3 | 3 | 4 | 4 | 1 | 4 | 4 | 4 |
| 8. Գյուղատնտես/այգեգործներին մատուցվող ծառայությունների հավասարությունը (մատչելիությունը և առկայությունը բոլոր ֆերմերների համար) | 1 | 4 | 3 | 4 | 0 | 4 | 4 | 4 |
| 9. Տեխնիկական ենթկռցվծք՝ գործիքների առկայություն՝ բոլոր մեքենաների տեսակների համար | 0 | 3 | 4 | 3 | 3.5 | 3 | 4 | 3 |

## ԱՂՅՈՒՍԱԿ 31 ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ, ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

| | Ջերմուկ | | Զառիթափ | | Մեղրի | | Տեղ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ՕԳՏ | ՄԱՏ | ՕԳՏ | ՄԱՏ | ՕԳՏ | ՄԱՏ | ՕԳՏ | ՄԱՏ |
| 1. Համայնքում աղբամանների առկայություն | 3 | 4 | 4 | 3 | 3 | 4 | 2 | 3 |
| 2. Աղբամանների որակ/պլաստիկի համար առկա բաժանում | 3 | 3 | 5 | 3 | 2 | 3 | 2.5 | 2 |
| 3. Աղբի հավաքման կետերի/վայրերի սանիտարական պայմանները | 2 | 4 | 4 | 4 | 3 | 5 | 5 | 4 |
| 4. Աղբատար/յուրաքանչյուր այլ աղբը հավաքող/ մեքենաների առկայություն և որակ | 4 | 4 | 3 | 3 | 4 | 4 | 5 | 4 |
| 5. Աղբի հավաքման կետերից ժամանակացույցի և աղբի հեռացման հաճախականության հարմարվետություն | 4 | 4 | 5 | 3 | 5 | 4 | 3 | 4 |
| 6. Ծառայության ֆինանսական հարմարավետություն | 5 | 5 | 5 | 3 | 5 | 4 | 5 | 4 |
| 7. Ծառայության մատուցողների վերաբերմունքն օգտվողների նկատմամբ/ եթե կիրառելի է | 4 | 4 | 5 | 4 | 5 | 4 | 5 | 3 |
| 8. Աղբի օգտագործման և անվտանգության հանդեպ հանրայի նընկալումներ և վստահություն | 2 | 2 | 1 | 4 | 3 | 4 | 4 | 3 |

### Աղյուսակ 32 Ընդհանուր տվյալներ՝ ՀԳՔ-հարցում. ՄԻՋԲՆ-ն Ճ-ի սպասարկում

| | Ջերմուկ | | Մեղրի | | Տեղ | |
|---|---|---|---|---|---|---|
| | *ՀԳՔ* | *հարցում* | *ՀԳՔ* | *հարցում* | *ՀԳՔ* | *հարցում* |
| 1. Միջբնակավայրային ճանապարհների մակերևույթի վիճակ | 3 | 2.9 | 4 | 4.1 | 3 | 2.4 |
| 1.1 Մեղրի ք. մտնող այլընտրանքային ճանապարհի մակերևույթի վիճակ (ասֆալտի առկայություն/լայնություն, երկարություն) | կ/չէ | կ/չէ | 5 | 4.1 | կ/չէ | կ/չէ |
| 2. Ջրահեռացման համակարգի առկայություն-որակ միջբն. Ճ-ի համար | 1 | 2 | 3 | 3.1 | 2 | 2.2 |
| 3. Միջբնակավայրային ճանապարհների մաքրման մեխ-ի առկ-ն, ձնամաքրում, Ճ-ի օգտագործման հնարավորություն կլոր տարի, հեշտ անցանելիություն, Ճ-ի վերանորոգման, մաքրման մեքենաների առկ-ն (տեսակ/որակ) | 4 | 3.4 | 4 | 3.6 | 3 | 2.6 |
| 4. Ընդհանուր միջբնակավայրային ճանապարհների անվտանգություն (նախազգուշական նշաններ, ժայռեր, քարաթափում) | 4 | 2.9 | 4 | 3.5 | 1 | 2.4 |
| 5. Միջբնակավայրային երկայնքով ուղղությունների և բնակավայրերի անունների նշման առկայություն և ճշգրտություն | 4 | 3.6 | 4 | 3.6 | 3 | 2.4 |
| 6. Միջբնակավայրային ճանապարհների գծերի առկայություն և որակ | 3 | 3.3 | 3 | 3.6 | 1 | 2.4 |

### Աղյուսակ 33 Ընդհանուր տվյալներ՝ ՀԳՔ- հարցում. ՄԻՋԲՆ-ն ՏՐԱՆՊ-ն ԿԱՊԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

| | Ջերմուկ | | Զառիթափ | | Մեղրի | | Տեղ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | *ՀԳՔ* | *հարցում* | *ՀԳՔ* | *հարցում* | *ՀԳՔ* | *հարցում* | *ՀԳՔ* | *հարցում* |
| 1. Անհրաժեշտ միջհամայնքային երթուղիների առկայություն | 3 | 3.4 | 3 | 2.6 | 5 | 4.4 | 2 | 2.1 |
| 2. Հանրային (մինի) ավտոբուսների առկայությունը միջբնակավայրային երթուղիներում ծառայելու համար | 3 | 3.4 | 3 | 2.1 | 4 | 4.4 | 1 | 2.1 |
| 3. Առկա հանրային (մինի) ավտոբուսների վիճակը | 3 | 3.4 | 5 | 2.8 | 4 | 4.4 | 5 | 2.1 |
| 4. Առկա հանրային (մինի) ավտոբուսների ծառ-ի որակը, ծառ-ն մատուցողների վերաբերմունքն օգտվողների ն-ք | 5 | 3.9 | 4 | 2.7 | 4 | 4.3 | 5 | 2.1 |
| 5. Ժամանակացույցի հարմարավետություն, կլոր տարի սպասարկում (օրվա և տարվա գրաֆիկ) | 3 | 3.4 | 4 | 2.1 | 4 | 4 | 4 | 2.1 |
| 6. Անվտանգությունը տր-ի օգտ. վայրերում (անցման նշաններ, Ճ-ի լայնություն) | 2 | 2.9 | 2 | 2.9 | 3 | 4 | 0 | 1.9 |
| 7. Օգտվողների ֆինանսական հարմարավետություն | 4 | 3.5 | 4 | 2.1 | 5 | 4.5 | 4 | 2.2 |
| 8. Կանգառների առկայություն | 3 | 2.5 | 1 | 2.1 | 4 | 3.9 | 2 | 2 |
| 9. Կանգառների որակ (նստատեղերի առ-ն և որակ, արևից/անձրևից պաշտպանություն, մաքրություն) | 2 | 2.1 | 0 | 1.8 | 5 | 3.9 | 0 | 2 |

### ԱՂՅՈՒՍԱԿ 34 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ՝ ՀԳՔ- ՀԱՐՑՈՒՄ. ԳՅՈՒՂ.ՏԵԽՆԻԿԱ, ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

| | Ջերմուկ | | Զառիթափ | | Գորայք | | Տեղ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | *ՀԳՔ* | *հարցում* | *ՀԳՔ* | *հարցում* | *ՀԳՔ* | *հարցում* | *ՀԳՔ* | *հարցում* |
| 1. Համայնքում անհրաժեշտ գյուղ. մեքենաների առկայություն (մեք-ի տեսակ) | 4 | 3 | 2 | 3.6 | 3 | 3.7 | 4 | 3.8 |
| 2. Համայնքում գոյություն ունեցող գյուղ. մեքենաների որակ | 4 | 2.8 | 3 | 3.3 | 3 | 3.6 | 3 | 3.6 |
| 3. Գյուղ. Մեքենաների հասանելիություն գյուղ. սեզոնի ժամանակ | 4 | 2.9 | 2 | 3 | 3 | 3.1 | 3 | 3 |
| 4. Ֆինանսական հարմրվտ-ն (վարձակալման հնար-ն, գներ) | 3 | 2.6 | 4 | 2.7 | 2 | 2.6 | 3 | 2.9 |
| 5. Գյուղ. մեքենաների տեխնիկական սպասարկման առկայություն և որակ տարբեր անհրաժեշտ մեքենաների տեսակների համար՝տարածք, վերանորոգման կայան., գործիքներ, անձնակազմ | 3 | 2.2 | 4 | 2.8 | 1 | 3 | 2 | 3 |
| 6. Չմշակված հողերի առկայություն | 5/1 | 2.6 | 4/2 | 3 | 3/2 | 3.8 | 5/5 | 3.9 |
| 7. Մատուցվող վերանորոգման ծառայությունների որակը և տևողությունը, արդյունքների հետ բավարարվածություն | 3 | 2.7 | 4 | 2.5 | 2 | 3.3 | 4 | 3.2 |
| 8. Գյուղատնտես/այգեգործներին մատուցվող ծառայությունների հավասարությունը (մատչելիությունը և առկայությունը բոլոր ֆերմերների համար) | 4 | 2.7 | 4 | 2.9 | 3 | 2.6 | 4 | 3.1 |
| 9. Տեխնիկական ենթկոցվծք՝գործիքների առկայություն՝բոլոր մեքենաների տեսակների համար | 3 | 2.4 | 3 | 2.4 | 3 | 2.7 | 3 | 3.2 |

### ԱՂՅՈՒՍԱԿ 35 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ՝ ՀԳՔ- ՀԱՐՑՈՒՄ. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ

| | Ջերմուկ | | Զառիթափ | | Մեղրի | | Տեղ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | *ՀԳՔ* | *հարցում* | *ՀԳՔ* | *հարցում* | *ՀԳՔ* | *հարցում* | *ՀԳՔ* | *հարցում* |
| 1. Համայնքում աղբամանների առկայություն | 4 | 3.7 | 3 | 3.9 | 3 | 4.2 | 2 | 4.1 |
| 2. Աղբամանների որակ/պլաստիկի համար առկա բաժանում | 3 | 3.3 | 3 | 3.2 | 3 | 3.9 | 2 | 3 |
| 3. Աղբի հավաքման կետերի/վայրերի սանիտարական պայմանները | 3 | 3 | 4 | 3.2 | 4 | 3.9 | 4 | 3.8 |
| 4. Աղբատար/յուրաքանչյուր այլ աղբը հավաքող/ մեքենաների առկայություն և որակ | 4 | 4.6 | 3 | 3.1 | 4 | 4 | 4 | 4.1 |
| 5. Աղբի հավաքման կետերից ժամանակացույցի և աղբի հեռացման հաճախականության հարմարվետություն | 4 | 4.3 | 4 | 3.6 | 4 | 3.9 | 3 | 4.1 |
| 6. Ծառայության ֆինանսական հարմարավետություն | 5 | 4.4 | 5 | 4.1 | 5 | 3.8 | 5 | 4.2 |
| 7. Ծառայության մատուցողների վերաբերմունքն օգտվողների նկատմամբ/ եթե կիրառելի է | 4 | 2.4 | 5 | 1.8 | 5 | 3.8 | 4 | 4.1 |
| 1. Համայնքում աղբամանների առկայություն | 2 | 3.5 | 2 | 1.4 | 3 | 3.5 | 3 | 3.9 |

# Հավելված 3 Քաղաքացիների գոհունակություն՝ ըստ ծառայությունների (հարցում)

**ԱՂՅՈՒՍԱԿ 36 ՄԻՋՔՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ**

| | Ջերմուկ | | Զառիթափ | | Մեղրի | | Տեղ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ԵԳ | ԱԳ | ԵԳ | ԱԳ | ԵԳ | ԱԳ | ԵԳ | ԱԳ |
| Ամենևին ոչ բավարարված | 28.6% | 17.4% | 27.8% | 29.6% | 5.7% | 2.9% | 43.1% | 57.1% |
| Որոշ չափով բավարարված | 18.7% | 9.8% | 11.1% | 9.3% | 5.7% | 3.6% | 18.1% | 5.7% |
| Միջին | 34.1% | 51.1% | 18.5% | 13% | 22.7% | 14.3% | 34.7% | 7.1% |
| Որոշ չափով բավարարված | 6.6% | 20.7% | 27.8% | 9.3% | 33.3% | 54.3% | 4.2% | 30% |
| Լիովին բավարարված | 12.1% | 1.1% | 14.8% | 3.7% | 32.6% | 25% | -- | -- |

**ԱՂՅՈՒՍԱԿ 37 ՄԻՋՔՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ**

| | Ջերմուկ | | Զառիթափ | | Մեղրի | | Տեղ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ԵԳ | ԱԳ | ԵԳ | ԱԳ | ԵԳ | ԱԳ | ԵԳ | ԱԳ |
| Ամենևին ոչ բավարարված | 5.5% | 2.2% | 66.7% | 27.8% | 3.5% | 2.1% | 69.4% | 64.3% |
| Որոշ չափով բավարարված | 6.6% | 18.5% | 5.6% | 1.9% | 1.4% | 0.7% | 6.9% | 11.4% |
| Միջին | 27.5% | 34.8% | 13% | 25.9% | 11.3% | 16.4% | 9.7% | 10.0% |
| Որոշ չափով բավարարված | 29.7% | 39.1% | 7.4% | 18.5% | 22% | 40% | 5.6% | 11.4% |
| Լիովին բավարարված | 30.8% | 5.4% | 7.4% | 5.6% | 61% | 40.7% | 8.3% | 2.9% |

## ԱՂՅՈՒՍԱԿ 38 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ, ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

| | Ջերմուկ | | Ջառիթափ | | Գորայք | | Տեղ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ԵԳ | ԱԳ | ԵԳ | ԱԳ | ԵԳ | ԱԳ | ԵԳ | ԱԳ |
| Ամենևին ոչ բավարարված | 13.2% | 4.3% | 37% | 9.3% | 17.4% | 21.7% | 27.8% | 17.1% |
| Որոշ չափով բավարարված | 14.3% | 17.4% | 13% | 13% | 17.4% | 30.4% | 15.3% | 5.7% |
| Միջին | 29.7% | 55.4% | 18.5% | 40.7% | 39.1% | 21.7% | 48.6% | 22.9% |
| Որոշ չափով բավարարված | 12.1% | 55.4% | 20.4% | 33.3% | 26.1% | 26.1% | 6.9% | 45.7% |
| Լիովին բավարարված | 7.7% | 15.2% | 9.3% | 3.7% | -- | -- | 1.4% | 8.6% |

## ԱՂՅՈՒՍԱԿ 39 ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

| | Ջերմուկ | | Ջառիթափ | | Մեղրի | | Տեղ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ԵԳ | ԱԳ | ԵԳ | ԱԳ | ԵԳ | ԱԳ | ԵԳ | ԱԳ |
| Ամենևին ոչ բավարարված | 11% | 2.2% | -- | 3.7% | 10.6% | 0.7% | 8.3% | -- |
| Որոշ չափով բավարարված | 6.6% | 6.5% | -- | 11.1% | 2.8% | 5% | 15.3% | -- |
| Միջին | 15.4% | 22.8% | -- | 11.1% | 9.9% | 17.9% | 58.3% | 2.9% |
| Որոշ չափով բավարարված | 29.7% | 42.4% | -- | 44.4% | 15.6% | 40.7% | 13.9% | 47.1% |
| Լիովին բավարարված | 37.4% | 26.1% | -- | 29.6% | 61% | 35.7% | 4.2% | 4.3% |

